№ 256 ՇԱԲԱԹ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 256

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՕՐ"

Գրական-գիտական-գեղարուեստական-հասարակական և խաղաղասիրական

ԱՄՍԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1912 Թ. ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամսագիրը հրատարակվելու է ամեն ամսվայ վերջին և բաղկացած է լինելու առնուազն 8 տպագրական թերթից (նւազը) և աւելի՝ եթէ միջոցները ներեն։

Ռուսաստանի համար { Տարեկան բաժանորդագինն — 6 ռուբլի։
«Մշակի» տարեկան բաժանորդների համար 4 ռուբլի։

Արտասահմանի համար { Եւրօպա — 20 ֆրանկ. «Մշակի» բաժ. համար 16 ֆր.
Ամերիկա — 4 դօլլար. » » » 3 դօլ.
Թիւրքիա — 6 ռուբլի » » » 4 ր.
Պարսկ. — 6 ռուբլի » » » 4 ր.

Ամեն մի համարը առանձին արժէ 50 կոպ.։

Հասցէն. Тифлисъ, Сергіевская № 5. Редакція журнала „Арорь".
Tiflis, Rédaction de la Revue „Aror".

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

◆◆◆

„ԱՐՕՐ"

1910 և 1911 Թ. Թ.

Ցանկացողները կարող են ստանալ «Արօրի» նախորդ, այն է 1910 և 1911 թ. թ. բոլոր համարները, վճարելով իւրաքանչիւր տարվան 4 ռուբլի. իսկ «Մշակի» կամ «Արօրի» 1911թ. բաժանորդները՝ 3 ռուբլի։

Արշակ Նազարեան ՄԻԼԵԱՆԸ

խնդրում է Թիֆլիս քաղաքի առեւտրա-արդիւնաբերական ընտրողներին շնորհ բերել կիրակի, նոյեմբերի 20-ին, առաւօտեան ժ. 11-ին, Բօրսայի շէնութիւնը, ներկայ լինելու

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Թիֆլիսի քաղաքային դումայի առաջիկայ 1911—1915 թ. թ. քառամեակի համար ընտրվելի ձայնաւորների թեկնածուների հարցը քննելու։

(ա. օ.) առ. 1096. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ՇԱԲԱԹ, նոյեմբերի 19-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ՄԵԴԷԱ

Դրամա 5 արար., Սուվօրինի և Բուրենինի, թարգ. Կ. Մելիք-Շահնազարեանի

Մասնակցում են՝ տ. տ. Ադամեան, Յասմիկ, Սիրանոյշ, պ. պ. Աբելեան, Աւետեան, Լաքս, Ղազարեան, Սեւումեան և ուրիշներ։

Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։

Ռեժիսեօր՝ Յ. ԱԲԼԵԱՆ

Տեղերի գները սովորական են։

Երկուշաբթի, նոյեմբերի 21-ին Տ. ՋԱԲԷԼԻ բեմական գործունէութեան XXX-ամեակի առթիվ յօբելեանական հանդիսաւոր ներկայացում։

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Տ. Յովհաննիսեան, Վ. Մամուլեան

(ա.օ.) 1091. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, նոյեմբերի 21-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

Տիկ. ՋԱԲԷԼԻ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ XXX-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ
ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ՎԱՇՏՕՆ

Կօմէդիա 4 արարուածով, հեղ. Օստրօվսկիի

Մասնակցում են. տ. տ. Ադամեան, Դուրեան-Արմէնեան, Ջաբէլ, Սիրանոյշ, պ. պ. Աբելեան, Ալիխանեան, Լաքս, Մամիկոնեան, Սեւումեան։

— ՎԵՐՋԸ —

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Ռեժիսեօր՝ Յ. ԱԲԵԼԵԱՆ

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 7½-ին է։

Յօբելեանական մասնաժողովի նախագահ՝ տիկ. Ն. Ալիբեգեան

(ա.օ.) առ. 1090. 3—2

КАЗЕННЫЙ ТЕАТРЪ

Въ воскресенье 20 ноября 1911 года
состоится литературный

СУДЪ

надъ ѲЕОДОРОМЪ ПРОТАСОВЫМЪ, героемъ посмертнаго произведенія Л. Н. Толстого

„ЖИВОЙ ТРУПЪ"

Предсѣдатель суда: преп. гимназіи И. Ф. ПАЛЬМОВЪ.
Обвинители: лекторъ высш. женск. курс. Н. А. СПИЛІОТИ и преп. гимн. А. М. РОЗОВЪ.
Защитники: К. А. КОЗЛОВЪ и артистъ СМОЛЕНСКІЙ, который въ роли Ѳеди Протасова скажетъ въ защиту себя слово.

Присяжные засѣдатели: г-жи В. В. Грабовская, Е. Г. Романова; г. г. Н. Е. Аргутинскій-Долгоруковъ, А. Л. Атанасянъ, И. Д. Гулисовъ, В. Е. Дубровинъ, Г. Д. Журули, А. Б. Евангуловъ, Н. П. Кокчаевъ, В. С. Колюбякинъ, Г. Г. Леманъ, Л. Е. Саркисовъ.

Члены суда: А. П. Дзюбановъ и С. И. Кротковъ.

Начало въ 8 час. вечера. Цѣны мѣстамъ обыкновенныя. Билеты продаются въ кассѣ театра отъ 10—2 и 6 до окончанія спектаклей.

(շ. կ.) (առ.) 1085. 3—2

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տելեֆօն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—33

ԹԻՖԼԻՍ—ԷՍՍԵՆՏՈՒԿԻ (ամառը)

ԲԺԻՇԿ Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ (սրտի)

Նախկին ասիստենտ Մ. Կ. Հ. կնախօս. կլին. հիւանդ.:
Բժշկում. Ֆիզիքական և օպերատիվ միջոցներ։
Ամեն օր՝ երեկ. ժամը 5—6-ը (բացի կիրակի օրերից)։
Երկուշաբթի. չորեքշաբթի և ուրբաթ օրերը առաւ. ժ. 11—12-ը (վաղօրօք պէտք գրվել)։
Բէբուտօվսկայա, 58. Տելեֆօն № 230.
(օ.մ.) առ. 1061. 10—8

ԻՐ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ կասէիք դուք, եթէ Ուսուցչական Ֆօնդի համար հաւաքված գումարները յանձնվէին Դրամատիկական Ընկերութեանը՝ ներկայացումներ կազմակերպելու և դերասաններին ապահովելու համար. կամ դրամատիկական ներկայացումների համար յատկացված գումարները տրվէին ուսուցչական ֆօնդի համար։

Ի՞նչ կասէիք դուք, եթէ՝ օրինակ՝ Հրատարակչական Ընկերութեան համար նուիրված գումարը յանձնվէր Որբախնամ Ընկերութեանը՝ որբեր խնամելու նպատակով։

Ի՞նչ կասէիք դուք, եթէ Իզմիրլեան մրցանակի գումարը յանձնվէր Հայուհեաց Ընկերութեանը՝ կար ու ձև սովորեցնելու համար։

— Անհեթեթութիւններ են,—կասէք դուք։

— Դա անկարելի է—կը բացագանչէք դուք։

Բայց մեր հրապարակի վրա մենք առիթներ ունենք լսելու և այդ տեսակ դատողութիւններ։

Նախ, սակայն մենք մի կարևոր ներածութիւն։

Միթէ մեզնից իւրաքանչիւրը չը գիտէ, թէ որքան յաճախ մեր երկիրը ենթարկվում է աղէտների։

Միթէ անբերրիութիւնը, վարակիչ հիւանդութիւնները, հեղեղները, կարկուտները և ուրիշ դժբաղդութիւններ չեն կրկնվում այնքան յաճախ մեր երկրում և չեն քայքայում մեր ժողովրդի բարեկեցութիւնը երկար տարիներով։

Եւ միթէ տարիներ շարունակ մենք չենք գանգատվել, որ երկիրը, ժողովուրդը մնում են առանց օգնութեան, և միթէ չը գիտենք, որ միայն ծայրայեղ արհաւիրքները երբեմնապէս գրաւում են իրանց վրա հանրային ուշադրութիւնը յուսահատական ազդակներով։

Թշուառ է մեր մասսայի կեցութիւնը։ Դժբաղդութիւնները ձեռք չեն վերցնում նրանից։ Եւ տարէ-տարի աւելանում են կարիքի մատնված շարքերը։

Պէտք է նրանց օգնութեան գալ թէ անմիջական նպաստ հասցնելով և թէ մաքառման համար նախնական միջոցներ գործադրելով։

Ոչ ոք չէ կարող չը յիշել, թէ որքան ծանր էր մեր երկրի և ժողովրդի դրութիւնը չորս տարի առաջ, երբ վրա հասաւ անբերրիութեան աղէտը և քայքայեց գիւղական տնտեսութիւնը մեր գաւառներում։

Այդ տնտեսութիւնը դեռ մինչև այժմ էլ չէ վերակազմուրված ամեն տեղ և գտնվում է նոր աղէտների սպառնալիքների տակ։

Տրամաբանական էր կարծել, անշուշտ, որ եթէ լինէր մի հիմնադրամ, մի հաստատութիւն, որոնք օգնութեան գային ժողովրդին իր ծանր օրերում, դա պէտք է ողջունվէր ամենամեծ համակրութեամբ։

Եւ ահա կայ մի այդպիսի գումար։ Այն նպաստներից, որոնք հաւաքվել էին աղէտեալների համար Նպաստամատոյց Յանձնաժողովի ձեռքով, մնացել է մի գումար, որը կարող էր ծառայել այդ նպատակին։

Մի յատուկ հիմնադրամ կամ ֆօնդ՝ օգնական լինելու կարօտեալ ժողովրդին՝ կը լինէր սկիզբ մի գեղեցիկ հաստատութեան։

Բայց մենք առիթ ունեցանք այս օրերս կարդալու մամուլի էջերում մի առաջարկ, որ այդ գումարը յանձնվի —ինչ էք կարծում ինչ նպատակի— Ուսուցչական Ֆօնդի համար։ Եւ առաջարկը արված էր ոչ կատակով, այլ լրջօրէն։

Ուսուցչական Ֆօնդ կազմելը շատ լաւ բան է, և մենք ամենամեծ համակրութեամբ ենք վերաբերվում նրան. բայց մի բարի բան չը պէտք է գայ խանգարելու մի ուրիշ՝ գուցէ աւելի ևս կարևոր ու էական նպատակ։

Լարեցէք ձեր եռանդը և հաւաքեցէք Ուսուցչական Ֆօնդի համար կարելին չափ շատ գումարներ, բայց մի հիմնէք ձեր աջողութիւնը ուրիշ նպատակների ծառայող գումարների փոխադրութեան վրա դէպի Ուսուցչական Ֆօնդի դրամարկղը։

Թշուառութեան և կարիքի դռները չափազանց լայն են բացված, և նրանք ծանրագին կերպով դեռ շատ անգամ կը յիշեցնեն ձեզ վեհագոյն պարտականութեան մասին դէպի ժողովրդի բարեկեցութեան խնդիրները։

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 նոյեմբերի

Պետերբուրգ.—Նոյեմբ. 30-ին Բագւում կայանալու է նաւթարդիւնաբերողների հերթական համագումարը։

Քութայիսում նոյեմբերի 29-ին թոյլատրված է գումարել կովկասեան մարգանէց արդիւնաբերողների հերթական համագումարը։

Առևտրի մինիստրութեան հանքային դեպարտամենտի բաժանմունքի պետ Ժակը նշանակվում է կովկասեան հանքային վարչութեան կառավարչի պաշտօնակատար։

Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց մասնակցել կաթողիկոսի ընտրութեանը բոլոր հոգևոր և աշխարհական պատգամաւորներին, որոնք լիազօրութիւններ կունենան մի քանի թեմերի կողմից, կամ որոնք կը հանդիսանան ներկայացուցիչներ այն թեմի, որի մէջ նրանք անձամբ չեն բնակվում։

Հարցապնդումների մասնաժողովը հոկտեմբերեանների, նացիօնալիստների և աջակողմեանների ձայների առաւելութեամբ հակառակ օպպօզիցիայի 9 ձայնի (լեհական կօլօ ձեռնպահ մնաց) բուռն վիճաբանութիւններից յետոյ որոշեց ընդունել այն հարցապնդումը, որ ուղղված է ներքին գործերի մինիստրին Կիեւում պատանի Իւշչինսկիին սպանելու առթիվ։ Հարցապնդումը բացատրութիւն է պահանջում մինիստրից Կիեւի ոստիկանութեան ապօրէն գործողութիւնների մասին։

—

Պետերբուրգ.—Ներքին գործերի մինիստրը մեկնեց Ղրիմ։

—

Բելգրադ.—Սկուպշչինա։ Նօվակօվիչը, բնորոշելով Հին-Սերբիայում բնակվող քրիստոնեաների ծանր դրութիւնը, ընդգծեց, որ շնորհիւ Բօլգարիայի եռանդի՝ Մակեդօնիայի ազգաբնակութիւնը գտնվում է լաւագոյն պայմաններում, և մատնանշեց, թէ լուրեր են պտտվում Թիւրքիայի սերբիական շրջաններում զօրքերի թիւը մեծացնելու մասին։ Հռետորը հարցրեց արտաքին գործերի մինիստրից, թէ ինչպիսի՞ միջոցներ են ձեռք առնված ցեղակից ազգաբնակութեան դրութիւնը բարւոքելու համար։ Միլօվանօվիչը պատասխանեց, որ թիւրք-իտալական պատերազմի սկզբից դրութիւնը Կօսսօվայի վիլայէթում վատթարացել է. զօրքերի աւելացումը Սերբիայի սահմանակից շրջաններում յարձակողական նպատակներով չէ կատարված, այլ ներքին անկարգութիւնների առաջն առնելու նպատակով է. տեղեկութիւններ կան, որ զէնքեր են բաժանված քրիստոնեաներին. կառավարութիւնը աչալրջութեամբ հետևում է և հարկաւոր եղած դէպքում ձեռք կառնէ անհրաժեշտ միջոցներ։

—

Կ. Պօլիս.—Պրինց Զիա-Էդդինը, որ Պօրտ-Սաիդում, յատուկ պատգամաւորութեան գլուխ կանգնած, ողջունեց անգլիական թագաւորական զոյգին, վերադարձաւ Կ. Պօլիս։

Կառավարութիւնը համաձայնեց Կումանօվօ երկաթուղագիծը միացնել (?)։

—

Լոնդոն.—Ասկվիտը, որ կամենում էր երէկ Տեմպլում «Ֆիլանտրօպ» ընկերութեան մէջ ճառել, հանդիպեց մի խումբ սուֆրաժիստկաների, որոնք չը թողին նրան խօսել, և ստիպված եղաւ մեկնել, ճառ չարտասանելով։

—

Պարիզ.—Պալատում ուժեղ հոսանք է սկսվել յօգուտ այն բանի, որպէսզի ֆրանս-գերմանական համաձայնութեան վաւերացումը տեղի չունենայ վիճաբանութիւններով։ Վաւերացումից յետոյ սպասվում է արտաքին քաղաքականութեան քննութիւնը, ըստ որում բացատրութիւններ են տալու Կալիօն և Դեսէլվը։

—

Պարիզ.—Պատգամաւորների պալատը ընդունեց ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւը, որով գաղտնի ծախսերի համար յատկացվում է 319,118 ֆրանկ։ Գաղտնի ֆօնդի առիթով Կալիօն դրեց վստահութեան հարց։ Գուչկովը մեկնեց Պարիզից։

—

Բերլին.—Տէրերի հետ ընդհարում ունենալուց յետոյ վաղը արձակվելու են մետաղաձուլական գործարաններից 78,000 բանւոր։

—

Լիսաբօն.—Սկսվեց անկարգութիւնների ժամանակ ձերբակալված բազմաթիւ անձանց գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են հակահանրապետական գործողութիւնների մէջ։ Գլխաւոր մեղադրեալը դատապարտվեց վեց տարով բանտարկութեան ու տասնամեայ աքսորի։

—

Ստօկհօլմ.—Վերին պալատի համար ընտրվեցին 87 աջակողմեան, 51 լիբերալ, 12 սօցիալիստ։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 նոյեմբերի

Պեկին.—Սահմանադրական պալատը դռնփակ նիստում ընդունեց փոխառութեան հարցը։

Յեղափոխականները, հեռանալով Սիանիանից, որն արդէն կառավարական զօրքերի ձեռքն է ընկել, փչացրին արհեստանոցների բոլոր մեքենաները։ Կառավարական զօրքերը քաղաքը վերցնելուց յետոյ գնդակահարեցին այն նաւակը, որոնցով Կարմիր Խաչի դրօշակի տակ վիրաւորներին էին տանում։

Լեանցզիչաօն և Լեանդունիանը հրաժարվեցին մասնակցել Պեկինի կառավարութեան նոր կաբինէտի մէջ։

—

Գիրին.—Ի նկատի ունենալով, որ ուժեղանում է քաղաքին և մերձակայքին սպառնող խունխուզների գործունէութիւնը, վաճառականութեան և քաղաքացիների նախաձեռնութեամբ կազմակերպվեց հասարակական ինքնապաշտպանութեան կօմիտէտ։ Խունխուզների դէմ կռւելու համար մտադրվում է կազմել կամաւորների մարտախումբ քաղաքի հաշւով։ Վարչութիւնը կօմիտէտին ցոյց է տալիս նիւթական աջակցութիւն։

—

Շանխայ.—Այստեղ ամեն ինչ հանգիստ է։

Նանկինից ոչ մի տեղեկութիւն չը կայ։

—

Վաշինգտօն.—Պաշտօնապէս յայտարարվում է, որ Միացեալ-Պետութիւնները առաջարկել են զօրքեր ուղարկել ոչ թէ Չինաստան, այլ Պեկինում գտնվող օտարազգիների դեսպաններին։

—

Վաշինգտօն.— Ամերիկական կառավարութիւնը առաջարկեց չինական կառավարութեանը ուղարկել, ինչպէս բօկսէրների ապստամբութեան ժամանակն էր, 2500 զինւոր Ֆիլիպպիններից՝ Պեկինի և ծովի միջև երկաթուղային երթևեկութիւնը պահպանելու և օտարազգիներին պաշտպանելու համար։

—

Կուանչէնդզի.— Ճապօնական տեղեկութիւնների համաձայն՝ Թուչժօուի շրջակայքում խռնխուռների պարագլուխը յայտարարել է իրան Մանջուրիայի առաջին յեղափոխական զօրաբանակի հրամանատար և դիմել է եապօնական հիւպատոսներին խնդրելով չէզոքութիւն պահպանել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

17 նոյեմբերի

Բագու.—Եկաւ Սարդար-Ասադը Թաւրիզի նահանգապետի ուղեկցութեամբ։

Լօնդօն.—Համայնքների պալատում, պատասխանելով ռուսական պահանջների մասին ուղղուած հարցապնդման, Գրէյը ասաց, որ ռուսաց կառավարութիւնից հաւաստիացումներ են ստացվել՝ թէ Ռուսաստանի ձեռնարկած քայլերը Պարսկաստանում ժամանակաւոր բնաւորութիւն ունեն. Գրէյը չէ կասկածում Շուստերի եռանդին ու բարի դիտաւորութիւններին, բայց նրա յամառ պահանջները վարչական պաշտօններում իր մարդկանց նշանակելու մասին ստեղծեցին անտանելի կացութիւն։ Անգլիան չէր կարող աջակցել այդօրինակ դրութեան, մանաւանդ որ Շուստերը մերժեց նրան տրվող խորհուրդները։

Օտարազգիներին պարսկական պաշտօններ տալը առանց ռուսական կամ բրիտանական կառավարութեան գիտութեան միշտ էլ առաջ կը բերէ միջադէպ ու քաղաքական անկարգութիւն, որ ինքնին վտանգաւոր է Պարսկաստանի անկախութեան համար։ Նրման միջադէպերի կրկնողութիւնը կարող է քայքայել ռուս-անգլիական համաձայնութեան հիմունքները, որի պահպանութիւնը սրտագին ցանկանում են երկու կառավարութիւնները։ Գրէյը չէ կասկածում, որ հարցի լուծումը վերջ ի վերջոյ կը յայտնագործվի ռուսաց կառավարութեան մասնակցութեամբ։

Դիլլօնի այն հարցին—օգտվե՞լ է արդեօք Ռուսաստանը բրիտանական կառավարութեան անունից, ուլտիմատումը ուղարկելու ժամանակ,—Գրէյը յայտնեց, թէ այդ հարցի առիթով ոչ մի հաղորդագրութիւն ստացված չէ ամերիկական կառավարութիւնից։

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 նոյեմբերի

Սալօնիկ.—Զինուորական շրջաններում իտալացիների յարձակումը համարվում է անխուսափելի։ Օֆիցերների ընտանիքները հեռանում են քաղաքից։ Լուրերի համաձայն, իտալական նաւատորմը ռմբակոծել է Լէմնոսը։ Ազգաբնակութիւնը սարսափահար է։

Պէրիմ.—Իտալական մի ռազմանաւ ռմբակոծում է Շէյխ-Սաիդ բերդը։

Տրիպօլիս.—Թշնամին անընդհատ փորձում է խանգարել իտալական դիրքերը ամրացնելու աշխատանքները։ Արաբական մի զօրամաս հրացանաձգութիւն ունեցաւ մի թիւրքական զօրախմբի հետ, որին ընդունեց իտալացիների տեղ։ Իտալական պահապան նաւերից մինը գրաւեց յունաց «Սօնիկօլա» առագաստանաւը կօնտրաբանդով և տարաւ նրան Բէնգազի։

Տրիպօլիս.—Իտալական ու օտարերկրեայ լրագիրների թղթակիցները Կանէվայից թոյլտւութիւն ստացան հեռագրել սպանված ու վիրաւոր իտալացիների վրա թիւրքերի գործադրած խստութիւնների մասին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 3 նոյեմբերի

Երկու շաբաթից աւելի է, որ բանակցութիւններ են տեղի ունենում անջումանի և Սամադ-խանի միջև հաշտութեան համար։ Ոչ անջումանն է անկեղծ կերպով վերաբերվում հաշտութեան խնդրին, ոչ էլ Սամադ-խանը։ Երկու կողմերն էլ խորամանկութիւն, կեղծ ու պատիր միջոցներ են գործադրում մէկը միւսին խաբելու, մէկը միւսից մի առաւելութիւն կորզելու։

Երկու օրից՝ մէկ անջումանի կողմից 10—15 երկար միրուքաւոր հաջիներ և երկար փափախաւոր ադնուականներ ձի են նստում, գնում Վասրինջ, Սամադ-խանի փլաւն ու հաւը ուտում, մինչև իրիկուն ղէլյան ծխում, գոնաւոր թէյ խմում, ծըխով լիքը սենեակում վիճաբանում, կամ աւելի ճիշդը՝ իրար շողոքորթում, իրար «բալի-բալի» անում և ուշ երեկոյեան Թաւրիզ վերադառնում առանց երկու չահու գործ կատարելու։

Սամադ-խանը, սակայն, աւելի է ցանկանում հաշտվել, քան թէ անջումանը։ Մեբինները՝ այսինքն ազգայնականները, կըռւողները, հաշտութեան մասին լսել անգամ չեն ուզում. սրանք շարունակ կրկնում ու սպառնում են, թէ «պէտք է Սամադ-խանին բռնենք, պէտք է նրան սպանենք» և այլն և այլն։ Մէկը իր սպանված եղբօր վրէժն է ուզում լուծել, միւսը իր հօր, որդու, փեսի, քեռու և կամ մի ուրիշ մօտիկ ազգականի վրէժն է ուզում հանել։ Իւրաքանչիւր մարդ իր համար է մտածում, բայց ոչ ոք խեղճ աղքատի համար, որ ուտելու հաց չունի, ոչ էլ միջոց աշխատելու, շահելու, որովհետև կանգ է առել ո՛չ միայն վաճառականութիւնը, այլ նոյն իսկ քաղաքի մէջ սովորաբար եղող գործերն ու արհեստներն էլ՝ հիւսնութիւն, որմնադրութիւն, մշակութիւն, նոյն իսկ բժշկութիւնը. մարդիկ, որ հիւանդ են և հարկաւոր է բժշկի դիմել, չեն դիմում. չեն դիմում, որովհետև գործ չունեն, փող չունեն և հետևաբար՝ բժշկին վարձատրելու կարողութիւն չունեն։ Եւ եթէ միջոց էլ ունեն բըժշկին դիմելու՝ չեն անում, որովհետև այնքան խորասուզված են օրվայ հարցի մէջ, որ իրանց հիւանդութիւնը միտ չեն բերում։

Այս խառնակ դրութեան մէջ շահվողներն են հացթուխները և բախկալները։ Հացթուխը, երբ հացի արժէքը 24 շահի էր, փռան դուռը կողպած էր պահում, ասելով «ցորեն չը կայ, որ հաց եփեմ. ցորեն տըւէք, ես պատրաստ եմ». և եթէ մի երկու տեղում հաց էին հանում՝ դա էլ լինում էր 1/4 ցորենի ալիւր, 1/4 գարու ալիւր, մնացած կէսը հող կամ թեփ։ Բայց հիմա, երբ հացը ծախում են լիդրը վեց ղռանով (առաջվայ արժէքից հինգ անգամ աւելի), բոլոր փռները բաց են, հացը առատ, սպիտակ, լաւ եփած և գեղեցիկ։ Մինչև իսկ մնում է միւս օրվան և հնանում։ Միսը նոյնպէս. երբ արժէքը հինգ ղռան էր, միս չէր ճարվում, մսավաճառները ասում էին՝ «քաղաք ոչխար չէ գալիս», բայց հիմա, երբ լիդրը 8 ղռան է, այնքան առատ է, որ օրերով մընում և հոտում է։ Լիդրը 8 ղռանով միս ծախելու համար՝ ոչխարը, եթէ գետնի տակում էլ լինի, գտնում ու հանում են, բայց առաջ «քաղաք ոչխար չէր գալիս»։ Բախկալները հօ թալանի կողմից բոլորին գերազանցում են. երևակայեցէք՝ ջարդված, հնացած խաղողը, որ առաջ լիդրը 10 շահի չէին առնի, հիմա ծախվում է 100 շահով։

Հաշտութեան պայմանները, որ առաջարկում է Սամադ-խանը անջումանին և պահանջում, որ ընդունվի անպայման կերպով, հետևեալներն են.

1) Ներում և ապահովութիւն Սամադ-խանի անձին և ստացուածքին։

2) Ներում և ապահովութիւն Սամադ-խանի բոլոր զօրավարներին և կռւողներին (ձիաւոր, սարբազ, թօփչի և այլն).

3) 400,000 թուման փողը (800,000 ր.), որ Սամադ-խանը հաւաքել է որպէս պետական տուրք, տրվի կառավարութեան հաշուին, որպէս զօրքի ծախք։

Անջումանը ընդունում է այս պայմաններից առաջին երկուսը, բայց մերժում է երրորդը։ Անջումանը պահանջում է, որ Սամադ-խանը անպայման վճարէ իր հաւաքած 400,000 թումանը, որ պետական տուրք է, և Սամադ-խանը—որպէս կառավարութեան դէմ ապստամբ և ըմբոստացող—իրաւունք չունի իւրացնելու, ոչ էլ իր ապստամբ զօրքին վճարելու այդ դրամով։

Սամադ-խանը փոխելով իր առաջարկութեան ձևը՝ ասում է. թող անջումանը ընդունէ պայմաններից առաջին երկուսը, իսկ վերջին պայմանը (400,000 թումանի խընդիրը) թոյլ տան, որ ինքը՝ Սամադ-խանը կարգադրէ Թէհրանի իշխանութեան հետ, ներքին և պատերազմական մինիստրների հետ։ Անջումանը այս վերջին առաջարկը չէր ուզում ընդունել, առարկելով թէ 400 հազար թումանը, որպէս պետական տուրք, պէտք է հասնի Ատրպատականի կենտրոնական կառավարութեանը, և գործադրվի Ատրպատականի զօրքի և ոստիկանութեան ծախքի վրա։ Սամադ-խանը մերժեց վճարել 400,000 թումանը և սպառնաց շարունակել պաշարումը. միևնոյն ժամանակ մի շատ խելացի խօսք ասաց. «Դուք,—ասաց նա,—400,000 թումանը ինձանից առնելու համար պէտք է ամենաքիչը 6 ամիս հետս կռիւ անէք. եթէ յաղթեցիք՝ կառնէք, եթէ չը յաղթէք՝ չէք կարող առնել։ Թէ յաղթէք և թէ յաղթվէք՝ այդ 6 ամսվայ ընթացքում դուք հէնց 400,000 թուման ծախքի մէջ պիտի ընկնէք ստիպված. գընդակ, հրացան, ռռճիկ և այլն՝ սրանք բոլորն էլ ծախք են պահանջում։ Երեք ամիս է, որ ինձ չէք կարողանում յաղթել և փախցնել. կասկածելի է, որ դուք 6 ամիս սրանից յետոյ էլ ինձ յաղթէք։ Այդ միջոցում ես դարձեալ մի 400,000 թուման պիտի հաւաքեմ ժողովրդից, որ կը լինի 800,000 թուման։ Այն ժամանակ դուք պէտք է դիմէք Թէհրան և այնտեղից օգնութիւն ուզէք իմ դէմս կռւելու համար։ Եթէ Թէհրանը զիջէ ձեր խնդիրքին և զօրք ուղարկէ իմ դէմս, այդ զօրքն էլ Թէհրանից մինչև Թաւրիզ հասնելը ամենաքիչը մի 200,000 թուման ծախք պիտի անէ։ Կասկածելի է նոյնիսկ, որ Թէհրանը Մահմէդ-Ալի շահին Մազանդարանում բանի տեղ չը դնելով՝ իր զօրքը ուղարկէ Ատրպատական՝ ձեզ օգնելու։ Բայց ընդունենք, որ Թէհրանը ձեզ օգնեց։ Մինչև 6 ամիս դուք ծախք կանէք 400,000 թուման, ես կը հաւաքեմ մի երկրորդ 400,000 թուման և Թէհրանի զօրքն էլ մինչև Թաւրիզ հասնելը ծախք կանէ 200,000 թուման. գումարը լինում է բոլորիս ծախքը միասին հաշուած՝ մէկ միլիօն թուման. հիմա՝ փոխանակ ազգը մէկ միլիօն ծախքի մէջ գցելու՝ աւելի լաւ չի լինի, որ դուք այս 400,000 թումանից անցնէք և անցկացնէք կենտրոնական կառավարութեան հաշուին, որպէս կառավարական զօրքի ծախք։ Վերջապէս՝ միթէ ես էլ կառավարութեան ծառայ չեմ»։

Ինչպէս երևում է, Սամադ-խանի այս փաստացի դիմումը անջումանի խելքին մտել է և մի կերպ կարգադրութիւն եղել է հաշտվելու, որովհետև երկու օր է, որ ճանապարհները էլի բացվել են և գիւղացիք իրանց մթերքները բերում են քաղաք, ինչպէս առաջ։ Մի ուրիշ հարց. ինչո՞ւ համար է անջումանը շտապում հաշտվել և ինչո՞ւ համար է Սամադ-խանը ցանկանում հաշտվել։ Պատասխան.—Անջումանը ուզում է հաշտվել, որովհետև իր ոյժը չի յաղթում Սամադ-խանին և Թէհրանից էլ օգնութիւն ստանալու յոյս չունի. երկրորդ՝ քաղաքում ոչ փող կայ կամաւորներին վճարելու, ոչ էլ պաշար՝ ձմեռվայ պաշար՝ ամեն բանից։ Քանի Մահմէդ-Ալին կը մնայ Պարսկաստանում և կունենայ, նոյնիսկ շատ աննշան բանակ, Թէհրանը չէ կարող Ատրպատական զօրք ուղարկել։ Միւս կողմից էլ Սամադ-խանը ցանկանում է հաշտվել, և հաշտվել՝ որքան կարելի է շուտ, որովհետև լսել է, որ Թէհրանի իշխանութիւնը ուզում է իր՝ Սամադ-խանի՝ գիւղերը և կալուածները յարքունիս գրաւել։

Դա նշանակում է՝ Սամադ-խանին զրկել ամեն բանից՝ գիւղերից, կալուածքից, Մարաղայի գաւառապետութիւնից՝ և պատժել նրան։ Գուցէ մահվամբ պատժել՝ եթէ բռնվի։ Եւ Սամադ-խանը միջոցներ է փնտռում հաշտվելու, որպէսզի չը զրկվի ոչ մի բանից։ Ենթադրվում է, որ նա արդէն լրվին, իր ուզածի պէս աջողվել է հաշտութեան մէջ, եթէ ոչ ճանապարհները ոչ մի պայմանով չէր բաց անի։ Անցեալ շաբաթ թէ Մարաղայից եկող պօստը և թէ Մարաղա գնացող պօստը յետ էր դարձրել. բայց այս շաբաթ Թաւրիզի պօստին թոյլ տուեց անցնել, և այսօր էլ Մարաղայի պօստը Թաւրիզ եկաւ։

Լսեցի, որ անջումանի և Սամադ-խանի միջև մի այսպիսի համաձայնութիւն էլ եղել է.—1) Սամադ-խանը և բոլոր իր մարդիկը ստանում են ներում և ապահովութիւն, 2) անջումանը դարձեալ յանձնում է Մարաղայի իշխանութիւնը Սամադ-խանին, 3) Սամադ-խանը Մարաղայում կը մնայ չէզոք և 4) թէ անջումանը և թէ Սամադ-խանը կը սպասեն, որպէս հանդիսատես, Մահմէդ-Ալի-շահի սահմանադրութեան դէմ մղած կռւի վերջին. եթէ սահմանադրութիւնը յաղթանակէ, Սամադ-խանը պէտք է մնայ սահմանադրական, իսկ եթէ Մահմէդ-Ալի-շահը յաղթէ, այն ժամանակ թէ Սամադ-խանը և թէ Ատրպատականի կենտրոնական անջումանը կանցնեն Մահմէդ-Ալի-շահի կողմը։ Բրաւօ անջումանին։ Անջումանը այս կարգադրութեամբ ուզում է—որպէս թէ—արիւն չը թափվի։ Սա այնպիսի պայման է, որ Սամադ-խանից բացի՝ մեր Պօղոս-Փաշն էլ կընդունի։ Անջումանը ուզում է ասել՝ «դու մեզ մի ստիպիր զէնքի ոյժով Մահմէդ-Ալի շահի կողմն անցնելու. Թող նա յաղթէ, մենք ինքներս կանցնենք նրա կողմը մեր ազատ կամքով»։ Ս. Սօլաք

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԾԻՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ մենք, հիմնվելով Մոսկվայի նախկին պատուիրակ բժ. Ս. Շահ-Նազարեանի հեռագրի վրա, յայտնել էինք, թէ Ս. Մամիկոնեանը իրան յայտարարել է կողմնակից Օրմանեան սրբազանի կանդիդատութեան։ Սակայն թէ այլ անձինք և թէ ինքը Ս. Մամիկոնեանը հեռագրով յայտնեցին, որ սա խօսել է ժողովում առհասարակ կաթողիկոսական ընտրելիների և ոչ առանձնապէս Օրմանեանի մասին։

«Սուրհանդակ» լրագրի երէկվայ համարում (№ 443) այդ լրագրի թղթակից Յ. Թադէոսեան առաջ է բերել Ս. Մամիկոնեանի ատենախօսութիւնը, որ հարկաւոր ենք համարում առաջ բերել, ճշգրտութեան մասին պատասխանատւութիւնը թողնելով, ի հարկէ, այդ թղթակցի վրա։

Ստ. Մամիկոնեանն ասել է մօտաւորապէս հետևեալը։ Թղթակիցը բերում է համառօտակի, բայց «ամենայն հարազատութեամբ»։

Հայոց կաթողիկոսութիւնը, պարոններ, շատ վաղ ժամանակներից գոյութիւն ունի, մօտ 1600 տարի, և իր պատմութեան ընթացքում ունեցել է երբեմն փայլուն, երբեմն անմխիթար վիճակ։ Փայլուն, ազգօգուտ է եղել հայոց հայրապետութեան վիճակը, երբ կաթողիկոսները հոգով ժողովրդական մարդիկ լինելով՝ չեն կարողացել տանել էջմիածնում փակվելու, ժողովրդից, ժամանակի ինտելիգենցիայից հեռու մնալու դրութիւնը և ձգտել են իրանց աթոռը փոխադրել ժամանակի կուլտուրական կենտրոնները, որ մօտիկ լինեն ժամանակի ինտելիգենտ ույժերին։ Եւ ահա մենք տեսնում ենք, որ այդպիսի կաթողիկոսները ելնում են էջմիածնից և իրանց աթոռը փոխադրում են Դուին, Սիս և ուրիշ՝ այն ժամանակվայ կուլտուրական վայրերը։ Ահա այդ շրջաններում էջմիածնի հայրապետութիւնը, երբ թափառում էր Դուին, Սիս և ուրիշ տեղեր, ցոյց է տուել արդիւնաւէտ, փառաւոր գործ. մեր ամենանշանաւոր կաթողիկոսները այդ շրջաններումն են եղել. ինչո՞ւ. որովհետև ժամանակի ինտելիգենտ ույժերի հետ են գործակցել։ Բայց նոյնը չէք գտնի աթոռի էջմիածնում եղած ժամանակաշրջանում։ Այնտեղ կաթողիկոսները հեռու են ժողովրդից և ժամանակի ինտելիգենցիայից, ուստի և ինչքան էլ կարող անձնաւորութիւններ լինեն, ոչինչ անել չեն կարող։ Այս երևոյթը դիտել կարելի է և վերջին տարիների կաթողիկոսների նկատմամբ։ Ներսէս V կաթողիկոսը Թիֆլիսումն էր՝ առիւծ էր, ամեն բան էր անում, մինչև իսկ ռուսաց բանակի գլուխն էր անցնում. բայց հէնց որ գնաց էջմիածին, էլ ոչինչ չարեց։ Նոյնը և Խրիմեանը. Նա քանի Պօլսումն էր, գործում էր անօրինակ կերպով. բայց երբ գնաց էջմիածին, շատ քիչ, գրեթէ ոչինչ բան արեց։ Տաթևում եղած ժամանակ Խրիմեանը ինձ ասաց. «Էջմիածնի օդը ծանր է, ինձ կը ճնշէ. այստեղի օդը ազատ է, մաքուր. կը հասկնա՞ս»։ Եւ ես հասկացայ, թէ ինչ էր ուզում ասել նա, բայց լռեցի։ Նոյնը կարելի է ասել և Իզմիրլեանի մասին։ Եւ այսպէս՝ պատմականօրէն տեսնում ենք, որ էջմիածնի կաթողիկոսները դրսում միայն կարող են գործ տեսնել, իսկ էջմիածնում զրկվում են գործելու ընդունակութիւնից էլ։ Կենդանացնել և փառաւոր կացուցանել հայոց հայրապետութիւնը հնար կը լինի, եթէ միայն մեր կաթողիկոսները մշտապէս գտնվեն ժամանակիս կուլտուրական վայրերում։ Այժմ մեր ազգային մտաւոր գլխաւոր վայրերը ներկայանում են Թիֆլիսն ու Պօլիսը։ Եւ եթէ ինչ-ինչ նկատումներով անհնարին է այդ... մնում է որ ժամանակի ինտելիգենցիան գնայ էջմիածին։ Ուստի եթէ ես իբրև պատգամաւոր գնամ էջմիածին, այն միտքը պիտի արծարծեմ, որ կաթողիկոսի մօտ կազմվի խորհրդատու մի մարմին ազգային նշանաւոր գործիչներից և ընդհանուր ազգից ընտրված։ Ինչ վերաբերում է այն բանին, թէ ում թեկնածութիւնն ունեմ ես կաթողիկոսութեան համար, որոշ բան ասել չեմ կարող. այդ ցոյց կը տան էջմիածնում լինելիք խորհրդակցութիւնները։ Բայց և այնպէս հնարաւոր թեկնածուների մասին ես կը յայտնեմ իմ ունեցած կարծիքը։ Առաջին տեղը դրանցից պատկանում է սրբազան Օրմանեան արքեպիսկոպոսին։ Սա խոշոր ամենախոշոր անձն է մեր ամբողջ հոգևորականութեան մէջ, ինչպիսի կողմից էլ որ դիտելու լինենք։ Անօրինակ եռանդ ու խելք ունեցող մի մարդ է սրբազան Օրմանեանը. հմուտ վարչագէտ և դիւանագէտ, եւրօպական կրթութեան տէր և մեր եկեղեցու ժողովրդական ոգին ամենալայն կերպով ըմբռնող և իր գիտական գրքերով էլ արծարծող։ Արմաշի դպրեվանքը և էջմիածնում հիմնած իր շկօլան ապացոյց են նրա գործ կատարել գիտենալուն։ Պօլսում եղած ժամանակս ես առաջին անգամ տեսայ հայոց դիւանական կառավարչական շրջանում այնպիսի՝ եւրօպական իմաստով խիստ և կանօնաւոր գործավարութիւն, որպիսին մտցրել էր Օրմանեան սրբազանը պատրիարքութեան գործավարութեան մէջ։ Առաջին անգամն էի տեսնում կրթված պաշտօնեաների այն շարքը, որի անդամները մէկ-մէկ մտնում էին պատրիարք Օրմանեանի մօտ, մանրամասն զեկուցանում իրանց ձեռքին ունեցած կանօնաւոր կազմած գործը, որի վրա պատրիարքը իր դիտողութիւններն էր անում։ Օրմանեանը հարազատ լուսաւորչական է և շատ է սիրում իր եկեղեցին։ Ասում են, թէ մի ժամանակ կաթոլիկ է եղել, բայց այդ ասողները մոռանում են, որ Օրմանեանը ոչ թէ հաւատը փոխելով է կաթոլիկ դարձել, այլ հէնց ծնվել է կաթոլիկ ծնողներից։ Չէ կարելի մեղադրել երեխային՝ թէ ինչու ես կաթոլիկ ծնվել և ոչ լուսաւորչական։ Բայց երբ նոյն կաթոլիկ Օրմանեանը Հասունեան վէճերի ժամանակ տեսաւ, որ Հասունը ուզում է հայ-կաթոլիկների եկեղեցական ծիսակատարութիւնը լատին ձևի դարձնել, իբրև ճշմարիտ հայ մարդ հայասիրութեամբ վառվեց և ոչ միայն կատաղի կռիւ մղեց Հասունի դէմ, այլ և լուսաւորչական եկեղեցու գիրկը մտաւ և այն օրից մինչև այսօր ոչ մի բանով չէ դաւաճանել հայ-լուսաւորչական եկեղեցու շահերին։ Մի բան միայն լաւ չէ. այդ այն է, որ նա երկար ժամանակ չէր թողնում պատրիարքութիւնը և կարծես իրան անհրաժեշտ էր համարում ազգի համար, որ ի հարկէ, սխալ է։ Յետոյ ասում են, թէ ինչ-որ նամակ է գրել մի տեղ և որոշ կուսակցութեան մասին լաւ չէ արտայայտվել. սակայն պէտք է ի նկատի ունենալ այն, որ դեռ չը գիտենք, թէ բառացի ի՛նչ է գրել, կամ գրե՞լ է իրօք թէ ոչ։—Դուրեան սրբազանի համար կարող եմ ասել, որ լաւ մարդ է, բանաստեղծական գրիչ ունի, բայց իբրև վարչական մարդ՝ թոյլ է։—Սրանից աւելի խոշոր անձնաւորութիւն է Սուքիաս սրբազանը. մի մարդ է սա, որ իր անձը զոհել գիտէ իր եկեղեցու համար, ինչպէս քանի անգամ արդէն ցոյց տուեց. ուժեղ կամքի տէր, հմուտ վարչագէտ, խելօք և փորձված։—Սուրէնեան սրբազանը երկու անգամ տեղապահ եղաւ և իր գործունէութեամբ ցոյց տուեց, որ հետևում է զգոյշ լինելու քաղաքականութեան. այդ զգուշաւորութիւնը նրա գլխաւոր արժանիքն է։ Թիֆլիսում նա ինձ հետ համամիտ եղաւ մեր դպրոցների ժողովրդականացման և 71 թւի կանօններով կառավարվելուն։ Միւս թեկնածուներից տալիս են Մեսրոպ եպիսկոպոսի և Կարապետ եպիսկոպոսի անունները. սակայն իմ կարծիքով դրանք դեռ երիտասարդ են և չեն անցել այն բովից, որ պահանջվում է կաթողիկոսական թեկնածուից, այն է՝ դեռ չեն գործել և շփվել հայ ինտելիգենցիայի հետ, և դեռ յարաբերութիւն չեն ունեցել օտար դիւանատների կամ դեսպանների հետ։

ԿԱԹՈՂ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մեզ գրում են Կ. Պօլսից, որ Բագրեւանդի (Բայազէտի) թեմի կաթողիկոսական պատգամաւոր է ընտրվել Խաչատուր Աֆրիկեանը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ *)

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 16 նոյեմբերի

Գուչկովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ի չարագործութիւնը առաջ բերեց երկու հարց. այն պաշտօնատար անձանց պատասխանատւութիւնը, որոնք անմիջապէս մեղաւոր են այդ չարագործութեան մէջ, և այն հիմնարկութիւնների պատասխանատւութիւնը, որոնք կանչված էին կռւելու յեղափոխութեան դէմ կիեվում և ցոյց տուին իրանց կատարեալ անընդունակութիւնը։

Մինիստրը ասաց, որ կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնի պարզելու ճշմարտութիւնը. նշանակված է սենատորական քննութիւն. նա կը տայ հարուստ ուսանելի նիւթ, բայց թէ մեղաւորներին ինչ կանեն, յայտնի չէ։ Հիմնարկութեան վերակազմութեան վերաբերմամբ մինիստրը մատնացոյց արեց պրօֆեսիօնալ գաղտնիքի վրա, նոյն բանը, ինչ նա հարևանցօրէն այդ առիթով ասել է. ցոյց է տալիս, որ մտադրութիւն կայ կատարելապէս խելացի միջոցներ ձեռք առնել։ Սակայն հարց է, թէ արդեօք բաւարար են դրանք։ Կիեվի սպանութեան մասին հաւաքվել է հարուստ նիւթ, ստեղծվել են լեգենդներ։ Արդեօք դա անհնարութիւն է, անփորձ վերաբերմունք գործին, կամ գիտակցական չըխափանումն, ցանկութիւն հեռացնել մի մարդու, որը անյարմար է դարձել։ Այդ հարցին կարող է պատասխանել միայն դատարանի վճիռը։ Դատաստանական քննութեան դէմ կարող է երկու առարկութիւն լինել, կարող են պատճառ բերել այն, որ դրանք կարող են բանալ խուզարկութեան պրօֆեսիօնալ գաղտնիքները. սակայն դա առարկութիւն չէ, այլ խօսքը կտուր գցել է։ Երկրորդ առարկութիւնը աւելի լուրջ է. վտանգաւոր են և մեծ ազդեցութիւն ունեն այն մարդիկ, որոնց դէմ պէտք է կռւել. նրանք համախոհներ ունեն. վտանգաւոր է նրանց գայրացնել։ Սակայն եթէ այդ մարդիկ այպիսիներ են, ուրեմն ծանր է վտանգված Ռուսաստանի վիճակը։ Առաջ բերելով գեներալ Նովիցկիի գրութիւնները, քաղուածքներ Սպիրիդովիչի և Կուլեաբկոյի վերաբերմամբ, մատնացոյց անելով որ մեր քաղաքական ոստիկանութեան անկարողութիւնը ակներև է ամենքի համար, հռետորը տեսնում է երկու ճանապարհ չարիքը արմատախիլ անելու համար. առաջինը՝ դա կիսամիջոցներ, վարչական ռէֆօրմներ։ «Դուք այդ մարդկանց կը հեռացնէք պաշտօնից փոքրիկ թոշակով, բայց յետոյ նրանք շանտաժով կը ստիպեն ձեզ լըրացուցիչ թոշակներ տալ. ամեն բան հին ձևով կընթանայ, իշխանութիւնը առաջվան պէս գերութեան մէջ կը մնայ»։ Երկրորդ ճանապարհ՝ անխնայ դատաստանական պատիժն է մեղաւորների, քաղաքական ոստիկանութեան լիակատար վերակազմութիւնը, նրան ենթարկելը գեներալ-նահանգապետին և պրօկուրօրական իշխանութեան։ «Արդեօք համարձակութիւն կունենանք այդ երկրորդ ճանապարհը ընտրել։ Բայց այստեղ յաղթութիւն է, որովհետև ձեզ հետ կը լինի ամբողջ ռուս ժողովուրդը» (բուռն ծափահարութիւններ)։

Կոմս Բօբրինսկի 2-րդը ազգայնականների կողմից յայտնում է, որ նա միանում է Գուչկովի ճառին և հոկտեմբերեանների բանաձևին։ Պահնորդական բաժանմունքների մասին յայտնած կարծիքը՝ դա խելահաս Ռուսաստանի ահագին մեծամասնութեան կարծիքն է։

Իշխան Շէրվաշիձէ Դումայի առաջ վերականգնում է երկու դէպքերի պատկերը. պայթումն Ապտէկարսկի կղզու վրա, որի ժամանակ հռետորը գտնվում էր Ստոլիպինի ընդունարանում, և պահնորդական բաժանմունքի պետ Կարպովի սպանութիւնը։ Հռետորը համոզված է, որ այդ երկու գործերը տեղի ունեցան ոստիկանութեան մասնակցութեամբ, գտնում է, որ ոչ միայն պահնորդական բաժանմունքները, այլ և ամբողջ ոստիկանութիւնը ոտից մինչև գլուխ պէտք է նորոգել։

Բուլատ, մանրամասն քննադատելով ներքին գործերի մինիստրի ճառը, մատնացոյց է անում, որ կառավարութիւնը ոչինչ չը գիտէ ոչ Ազէֆի գտնվելու տեղի, ոչ էլ սենատոր Տրուսևիչի քննութեան հետևանքների մասին, ոչ էլ այն, թէ ինչպէս պէտք է վերակազմել պահնորդական բաժանմունքը։ Սեպտեմբերի 1-ի ամբողջ սարսափելի դէպքի մէջ մինիստրը տեսաւ միայն ինչ որ շրջաբերականի խախտումն, այն ժամանակ, երբ Ստոլիպինը սպանվեց պահնորդական բաժանմունքի ագենտի ձեռքով, իսկ սօցիալիստները այդ գործում, ինչպէս երևում է յեղափոխական հրատարակութիւններից, ոչինչ մասն չունէին։ Հռետորն ասում է, որ այդ դէպքում Դուման կարող է միայն զարմանք յայտնել ներքին գործերի մինիստրի ճառի բովանդակութեան առիթով։

Րօդիչէվ գտնում է, որ «բոլորը» ինչ այժմ տեղի է ունենում, սիզիֆեան հար-

---

*) Տես «Մշակ» № 255.

ցանկացումը կրկնութիւնն է միայն. այն ժամանակ ներքին գործերի մինիստրը յայտնում էր, որ Աղէֆը ոչ մի յանցանք չէ գործել, դատարանը կը պարզէ բոլոր ճշմարտութիւնը։ Հռետորը կարծում է, որ այժմեան դռնփակ դատարանը ոչ մի արդարութիւն չէ կարող բանալ։ Դիմելով մինիստրի պատասխանին, հռետորը շատ բնորոշ է համարում, որ ներքին գործերի մինիստրի սպանութիւնը տեղի է ունեցել միայն շրջաբերականի խախտումից։ Այս ամենի մէջ հռետորը մեղադրում է Դումայի կենտրոնին, որ իր պատասխանատւութեամբ ծածկեց կառավարութեան բացատութիւնները Աղէֆեան գործի առիթով։

Դռնփակ նիստում Շուբինսկին ասում է, որ հոկտեմբերեանները կողմնակից են որ 50 անդամների ներկայացրած հարցապնդումը չը հրատարակվի ի գիտութիւն ընդհանուրի։

Դրա դէմ խստագոյնս բողոքում է Պօկրօվսկին, որի կարծիքով բոլոր հարցապնդումները առհասարակ քննվելու են ժողովրդական ներկայացուցիչների բացէ ի բաց մասնակցութեամբ. բայց որովհետև կենտրոնը այդպիսի հակաժողովրդական որոշում է կայացնում, ուստի և սոց.-դեմօկրատները իրանց հարցապնդումը յետ են վերցնում։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոյեմբերի 17-ին Թիֆլիսի նահանգական դատարանի 2-րդ քրէական բաժնում նշանակված էր հայ գրող Սարգիս Մուբայաճեանի (Ատրպետի) սկսած դատը Համազասպ Նոհրատեանի դէմ զրպարտութեան համար։

Ատրպետի կողմից իբրև մասնաւոր ամբաստանիչ պաշտպանում էր երդ.-հաւատարմատար Սենեքերիմ Արծրունին, իսկ Նոհրատեանի պաշտպանն էր երդ.-հաւատարմատար Տ. Յովհաննիսեան։

Ի նկատի ունենալով, որ ներկայ դատն ունի հասարակական նշանակութիւն, հարկաւոր ենք համարում տալ նրա մանրամասն նկարագրութիւնը։

Կարսի բնակիչ Սարգիս Մուբայաճեանի հաւատարմատարը 1908 թ. սեպտ. 2-ին Թիֆլիսի I մասի քննիչին ներկայացրած բողոքի մէջ գրում է հետևեալը.

«Ներկայ (1908 թ.) տարվայ «Մշակ» լրագրի № 83-ի մէջ զետեղված է Իբօ ստորագրութեամբ մի թղթակցութիւն Թաւրիզից «Նամակներ Պարսկաստանից» վերնագրով այս բովանդակութեամբ.

Թաւրիզ, 29 մարտի

Թէ որպիսի հասարակական, պետական կարգերի ճանկերումն է խոշտանգվել թշւառ Իրանը դարեր շարունակ, ոչ իրերին, երկրին մօտ ծանօթ ընթերցողի համար երևակայելն անգամ դժուար է։ Անթիւ օրինակներից մէկը միայն հարկադրված ենք առաջադրելու ընթերցողին, իրականութեան ամենաաղօտ մի հեռանկարը պատկերացնելու համար։

Հարկադրված ենք այդ օրինակը ցուցադրելու, որովհետև այստեղ՝ որպէս հայելու մէջ նկատվում է մեր մի հայ գրագէտի իսկական պատկերը և հոգին, որոնց այլանդակութիւնը զարհուրում է մարդուն օրըստօրէ մարդատեաց դառնալ... Փաստերը խօսեցնենք, լեզու առած, սիրտ մորմոքող փաստերը... 15 օր է հայոց առաջնորդարանում «բաստ» է նստել (ապաստանել) շէյխ Իբրահիմ անունով մի Թուրք, և չը նայած առաջնորդի և թեմական խորհրդի ջանքերին—հեռացնել առաջնորդարանից, Թուրքը անդրդուելի է մնում և իր ցաւին դարման է խնդրում առաջնորդից։

Շէյխ Իբրագիւլայի արշաւանքի ժամանակ՝ «բաստ» նստող շէյխ Իբրահիմի հօր մօտ 10 գիւղերը ենթարկվում են աւերի և կողոպուտի։ Այդ օրերում մեռնում է Իբրահիմի հայրը և շրջակայ Աւշար-խան բնակիչները, շէյխ Իբրագիւլայի քաշվելուց յետոյ, տիրապետում են այդ կալուածքները, ընդդիմադիր ոյժ չունենալու պատճառով, ևս առաւել որ Իբրահիմը այդ ժամանակ հազիւ 10 տարեկան պատանի է լինում։ Տարիներ անցնում են, կաշառքների և «թասարրուֆի» օրէնքով բնակիչները տիրապետած վայելում են գիւղերի եկամուտները։ Պարսկական դիւանատները, ուր բացառապէս գործեր անօրինողը ամենակարող «փէշքաշները», կաշառքներն են, փակված են մնում շէյխ Իբրահիմի բաղխումների դիմաց, մինչև որ մի օր դա պատեհութիւն է ունենում ծանօթութիւն ունենալ Կովկասից տեղս եկած մի հայ վաքիլի, որը մի քանի տարինեց փաստաբանի անունով ապրել է Թաւրիզում։

Փաստաբան-գրագէտը առնելով Իբրահիմի օրինաւոր կալուածաթղթերը՝ համոզվում է նրա պահանջների ճշմարտութեան և գործը վերցնում է իր վրայ, պայմանաւորվելով որ ամեն դատական ծախքերն ինքը հոգայ (որովհետև Իբրահիմը յետին ծայր չքաւորութեան էր դատապարտված) և գործը տարած պարագային ծախքերը վերցնելուց յետ՝ մնացած արդիւնքը հաւասար բաժին անէ շէյխ Իբրահիմի հետ։

Գրագէտ-փաստաբանը սկսում է գործը. իր հաշւով բաւական ծախքեր է ունենում պարսիկ «քարկուզարների բերանը քաղցրացնելու» և օրինական թղթեր վաւերացնելու համար։ Գործի բարդութիւնը ժամանակի ձգձգումն էր պահանջում։ Որպէս ռուսահպատակ՝ մեր գրագէտ-փաստաբանը օրինական թղթերը ձեռքին բաւական նեղն է դնում պարսիկ կառավարութեան, որը «ոյժ չը յաղթելով էշին, սկսում է փալանը ծեծել»։ Խեղճ շէյխ Իբրահիմը կառավարութեան կողմից մեղադրվելով, որ իր թղթերը ծախել է ռուսահպատակի, ստիպված է լինում մօտ 4 տարի բանտ նստել։ Վերջին անգամ բանտ առաջնորդվելիս ներկայանալով իր հաւատարմատար-փաստաբանին, յանձնելով նրան իր մօտ եղած բոլոր մնացած դօկումենտները և նոյնիսկ իր փաստաբանի հետ ունեցած պայմանաժամթուղթը այն հաստատ համոզումով, որ, իրան բանտում տանջանքի ենթարկելիս, ստիպված չը լինի այդ դօկումենտները տալով և խոստովանութիւններ անելով գործը փչացնել, խնդրում է իր հաւատարմատարից, որ եթէ ինքը բանտում մահանայ, իր ժառանգներին առնուազն չը թողնի (որովհետև փաստաբանի մօտ գտնվում է շէյխ Իբրահիմի մի ստացագիրը, որը իբր 20,000 թումանի իր՝ յիշեալին ունեցած պարտքի դիմաց է գիւղերը յանձնել նրան)։ Երկար տարիներ ինկվիզիցիական տանջանքների է ենթարկվում խեղճ Իբրահիմը, բայց ի վնաս գործի ոչ մի խոստովանութիւն։ Շէյխը բանտումն է լինում, երբ գործը վերջացվում է 25,000 թումանով. այդ գումարն ստանում է փաստաբանը և կծիկը դնում։ Այսօր առանց դօկումենտների, առանց իրաւաբանական փաստաթղթերի մնացած շէյխ Իբրահիմը արդարութիւն է պահանջում առաջնորդարանից։

Վերջացնում ենք մեր տեսիլքը առայժմ յուսալով, որ մեր ձայնը արձագանք կը գտնէ և խեղճ Իբրահիմը բաւարարված կը հեռանայ առաջնորդարանից. այլապէս՝ կրկին հրապարակ կը գանք նախատակված արդարութիւնը հասարակաց դատարանին յանձնելու։ Իբօ

«Դրանից յետոյ «Վտակ» հայ լրագրի № 117-ի մէջ Կարսի բնակիչ Նոհրատեանի ստորագրութեամբ երևաց մի նկատողութիւնն հետևեալ բովանդակութեամբ.

Կարս, 22 ապրիլի 1908

«Մշակի» № 83-ի մէջ պ. Իբօն Թաւրիզից գրած իր թղթակցութեան մէջ հանդէս է գալիս կովկասցի հայ փաստաբան-գրողի դէմ, որը ամենաանբարեխիղճ և ցած կերպով շահագործել էր շէյխ Իբրահիմին և օգտվելով նրա միամտութիւնից և հանգամանքներից իբրև հաւատարմատար՝ ընդունելով 10 գիւղերի գործը ծախել է հակառակորդին 25,000 թումանով և անցել Ռուսաստան, թողնելով անմխիթար և դժբաղդ իրան վստահացող շէյխ Իբրահիմին (գիւղերի վրա տիրապետողի անունը մոռացել եմ և նրա անունը տալիս եմ համաձայն պ. Իբօի թղթակցութեան)։

Թաւրիզ եղած ժամանակս այս գործի առիթով ես հաւաքել եմ տեղեկութիւններ հաւաստի աղբիւրից, և թէև ուշ, բայց և այնպէս իմ պարտականութիւնն եմ համարում բարձրացնել նաև իմ ձայնը և հրապարակով յայտնել, որ իրան սօցիալիստ անուանող և շահագործողների դէմ բողոքող գրող-յափշտակիչը ոչ այլ ոք է, եթէ ոչ Սարգիս Մուբայաճեանը (Ատրպետ), և հրապարակով նրանից պահանջել, որ արդարանայ մամուլի կամ ընկերական դատարանի միջոցով այս յոյժ դատապարտելի և ցած գործողութիւնների համար և գոհացում տայ տիրոջը և այլևս երբէք դուրս չը գայ այս կամ այն իդէալի դիմակի ներքոյ թագնված հասարակութեան առաջ իր շահատակութիւնների պատճառով։

Ն. Նոհրատեան

«Միևնոյն լրագրի նոյն տարվայ № 125-ում Հ. Նոհրատեան ստորագրութեամբ լոյս տեսաւ հետևեալ ուղղումը.

«Վտակ» լրագրի № 117-ում Կարսից ուղարկված իմ թղթակցութեան տակ, որ վերաբերում էր պ. Մուբայաճեանի հերոսական արարքներին և թալաններին, սխալմամբ տպված է Հ. Նոհրատեանի (Համազասպ Նոհրատեան) փոխարէն Ն. Նոհրատեան։ Թիւրիմացութեան առաջն առնելու, նմանապէս և, որպէսզի գրող-թալանչիի համար պարզ լինի թղթակցի անունը, խնդրում եմ լրագրի մօտակայ համարներից մէկում ուղղել այս տպագրական սխալը։ Հ. Նոհրատեան

«Այդպիսով, Հ. Նոհրատեանը անուանելով իմ պաշտպանեալին գրող-կողոպտիչ և այն և հրապարակօրէն յայտարարելով Իբօ ծածկանունով Թաւրիզից գրած թղթակցութեան ճշգութիւնը, իր վրա է ընդունում և այդ թղթակցութեան ամբողջ պատասխանատւութիւնը։ Սակայն որովհետև «Մշակի» մէջ Իբօի հաղորդած և ապա «Վտակի» մէջ կրկնված ամբողջ պատմուածքը գլխովին ստութիւն է, որովհետև իմ պաշտպանեալը որևէ մի շէյխ-Իբրահիմի հետ նրա գիւղերի առիթով ոչ մի պայմանագրութեան մէջ չէ մտել, երբէք նրանից չէ ստացել հաւատարմաթուղթ որևէ գործերի պաշտպանութեան համար, նրանից ոչ մի բան չէ ձեռք բերել, և որովհետև Հ. Նոհրատեանի հաղորդած փաստերը խայտառակում են պատիւը և բարի համբաւը իմ պաշտպանեալի, ոչ միայն իբրև անշահասէր հասարակական գործչի, այլև իբրև յայտնի հայ գրողի, ուստի պատիւ ունեմ խնդրել ձեզ, պ. քննիչ, ենթարկել քրէական պատասխանատւութեան Հ. Նոհրատեանին մեղադրելով նրան պատժագրքի 1535-րդ յօդուածով»։

Այս գանգատի հիման վրա Հ. Նոհրատեանը ենթարկվեց դատի զրպարտութեան համար։ Քննութեան ընթացքում, Նոհրատեանի խնդրելով, քննիչը իբրև վկաներ, գրաւոր հարցուփորձի էր ենթարկել Թաւրիզի ռուսաց ընդհանուր հիւպատոսին և այլ անձանց, որոնք և գրաւորապէս հաղորդել են իրանց տեղեկութիւնները Ատրպետի մասին։ Նոյեմբերի 17-ին, գործի քննութեան առաջ, Նոհրատեանի պաշտպան Տ. Յովհաննիսեանը դարձնելով դատարանի ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ, հակառակ իր խնդրանաց, դատարանը չէ կանչել մօտ 10 վկաների, որոնց թւում և շէյխ Իբրահիմին, որպիսի վկաների ցուցմունքը կապացուցանեն, որ ամբաստանեալ Նոհրատեանը գրել է իր յօդուածը բարեխղճօրէն, ունենալով հիմունք վերագրելու Ատրպետին անուանարկիչ վարմունք, միջնորդեց յետաձգել գործը և կանչել այդ վկաներին։

Ատրպետի փաստաբան Ս. Արծրունին խնդրեց մերժել ամբաստանեալի պաշտպանի միջնորդութիւնը։ Սակայն դատարանը որոշեց յարգել այդ խնդիրքը և յետաձգել գործի քննութիւնը՝ վկաներին կանչելու համար Թաւրիզից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքային ներկայացաւ Պարսկաստան մեկնող I կովկասեան հրացանաձիգ բրիգադայի հրամանատար գեն.-մայոր Բօգշանինը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ֆինանսական մասի կառավարիչ Ժուրուլիի հաշւից երևում է, որ եթէ հնար լինի ստանալ բոլոր այն տուրքերը, որ պարտական են կառավարական, հասարակական ու մասնաւոր հաստատութիւնները քաղաքային գանձարկղին, կը ստացվի իբրև եկամուտ 686,000 րուբլի։ Բայց և այնպէս 1912 թւին սպասվում է դեֆիցիտ ոչ աւել ոչ պակաս 1.799,000 րուբլի։ Ժուրուլին այնուհետև ուզում է կրճատել ծախքերը. օրինակ՝ նա առաջարկում է, որպէս զի միջնորդութիւն յարուցվի կառավարութեան առաջ՝ 20 տարով չտանել քաղաքից ոստիկանութեան պահպանութեան խոշոր գումարը. ամեն տարի քաղաքային վարչութիւնը այդ հաշւին կարող է տալ պետական գանձարանին միայն տարեկան 60,000 րուբլի։ Բացի դրանից՝ եթէ թոյլ տրվի քաղաքին կարճ ժամանակով կնքել 400,000 րուբլու փոխառութիւն, այն ժամանակ ըստ պրոֆեսոր Սիվէրսի հաշւեկշռի, կարելի կը լինի հանգցնել դեֆիցիտը։ Ամենավերջը Ժուրուլին մխիթարում է յոռետեսներին, որ քաղաքը մի միլիօն րուբլի է ստանալու անդրկովկասեան երկաթուղիների և զինւորական վարչութիւններից քաղաքային հողամասերը գրաւելու համար։

◆ Անցեալ օրը մի յատուկ մասնաժողով քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի առաջնորդութեամբ դիտեց եղբ. Զուբալովների ներկայացուցչի հետ երեխաների նորակառոյց հիւանդանոցի շէնքը։ Հիւանդանոցի վերջնական կահաւորման համար հարկաւոր կը լինի դարձեալ մօտ 100,000 րուբլի։ Այդ մասին Զուբալովների ներկայացուցիչը տեղեկացրել է եղբ. Զուբալովներին, որոնց հաշւով և կառուցվում է գեղեցիկ—թէ իմաստով ու թէ արտաքինով—հիւանդանոցը։

◆ Ներկայումս կատարվում են նախապատրաստական աշխատանքներ քաղաքային բոլոր հաստատութիւններում, որպէսզի հնարաւոր լինի 1912 թւի յունվարից հաշւապահութեան մէջ մտցնել կրկնակի իտալական սիստեմ, որ ցայսօր բացակայում է միլիոնների եկամուտ ունեցող մի հասարակական հիմնարկութեան մէջ։

◆ Պաշտօնաթող գնդապետ Ի. Փիրադովը քաղաքային վարչութեան ներկայացրեց իր կտակը, որով նա յօգուտ Թիֆլիս քաղաքի թողնում է 20,000 րուբլու գոյք Փօթիում։ Տոկոսների կէսը գործադրվելու է գիտական աշխատանքների համար վարձատրութիւն տալու, իսկ միւս կէսը 100 տարվայ ընթացքում պէտք է բարդվի կտակված դրամագլխին։ 100 տարուց յետոյ ստացվելիք գումարը գործադրվելու է կրթական նպատակների վրա։ Փիրադովը քաղաքին ընծայեց նաև մեծ գրադարան։

◆ Թիֆլիսումն է գնչուական երգչուհի Նաստիա Պօլեակօվան իր երկու եղբօր հետ։ Նոյեմբերի 23-ին երեքով համերգ են տալու Արտիստական Թատրոնում։ Պօլեակօվները աջողութիւն են ունեցել Մօսկվայում։

◆ Ժողովրդական Տանը վաղը ցերեկով ժող. համալ. ընկերութեան նախաձեռնութեամբ տեղի կունենայ հանդիսաւոր ցերեկոյթ ի յիշատակ Լ. Տօլստոյի մահվան տարեդարձի։

◆ Թիֆլիսի հասարակական կլուբի աւագների խորհուրդը համաձայնութիւն է կապել Թիֆլիսի ժողովարանի և Արտիստական Ընկերութեան հետ՝ նպատակ դնելով հրաւիրել Թիֆլիս Մոսկվայի յայտնի դասախօսներ, օրինակ պրոֆ. Այխենվալդին, Կօգանին, ռուս ու օտար ազգի գրականութեան մասին յիշեալ կլուբներում դասախօսելու համար։ Այսօր հասարակական կլուբում տեղի կունենայ ներկայացում սիրողների մասնակցութեամբ։

◆ Յայտնի դաշնակահար Հօֆմանը մեկնեց Բագու։

◆ Այսօր, կովկասեան բժշկական ընկերութեան շէնքում, երեխաների համար տ. Մկրտչեանը ռուսերէն ժ. 4—5 կը կարդայ «Իվան Ցարևիչի և գայլի հեքիաթը»։ Վաղը Գարդիչեանը հայերէն ժ. $9^{1}/_{2}$—11 կը դասախօսէ Քրիստափոր Կոլումբոսի մասին։ Տիկ. Աւալիանին վրացերէն ժ. 11—12 կը խօսէ՝ «Քնած թագուհու» մասին։ Մուտքը ձրի է։

◆ Վաղը, կիրակի, Զուբալովի Ժողովրդական Տանը, երեկ. ժամը 8-ին, ժողովրդական գիշերում կը լինի գրական դատ։ Դատվելու է Լ. Տօլստոյի «Կրեյցերեան սօնատա»-ի հերոս Պօզդնիշեվը՝ հանդերձ այն հարցի թէ ինչպիսի՛ ազդեցութիւն ունի երաժշտութիւնը մարդու վրա։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի տեղեկութիւնների համաձայն, հոկտեմբեր ամսվայ ընթացքում Թիֆլիս քաղաքում տեղի են ունեցել 163 յանցագործութիւններ։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է Միքայէլ Գերասիմովիչ Կաֆեանից 12 ր. 60 կ. 6 ամսվայ ճաշավարձ Ընկ. ձրի և էժանագին ճաշարանում ճաշելու համար «Մշակ» լրագրի № 254-ի մէջ տպված նկարչական դպրոցի չքաւոր աշակերտ Մեսրոպ Փիլթիկեանի համար։

◆ Առաջիկայ երեքշաբթի կայանալու է Հայոց Ազգագրական Ընկերութեան հրապարակային նիստը, ուր Ա. Սարուխանեանը Թիւրքահայոց սահմանադրութեան յիսնամեակի առիթով կը կարդայ մի դասախօսութիւն հետևեալ ծրագրով.—ազգային սահմանադրութեան ծագման պատմութիւնը և նրա ազդեցութիւնը Թիւրքահայոց կրթական և քաղաքական զարգացման վրա. սահմանադրութեան զանազան շրջանները մինչև այժմ, նրա ուղղութիւնները, առաւելութիւնները և թերութիւնները։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ տիկ. Ջաբէլի յոբելեանի առիթով կազմված յոբելեանական մասնաժողովը յոբելեանական ներկայացման և հանդէսի տոմսակները յանձնել է Արտիստական Ընկերութեան Թատրոնի կասսային, որտեղից կարող են ձեռք բերել տոմսակներ ցանկացողները։

◆ Բագւում պարոն Տ. Ամիրեանը, որ մեղադրվում է «Դաշնակցութիւն» կուսակցութեան գործով, Պետերբուրգից պաշտօնական ծանուցում ստացաւ, որ նրա միջնորդութիւնը իր 33 վկաներին դատարան կանչելու մասին՝ սենատը յարգել է։ Ուրեմն եթէ այդ տեսակ միջնորդութիւնները յարգվին, այն ժամանակ,—շատ իրաւացի կերպով «Баку»-ն նկատում է—բոլոր վկաների թիւը հաւանօրէն կանցնէ 2000 մարդուց։

◆ Մեզ հաղորդում են, որ ամբողջ Արաբանի գիւղերում սաստիկ տարածված է տաւարի մէջ ժանտախտը և մեծ կոտորած է անում նրանց շրջանում։ Այնտեղ արդէն ուղարկված է բժշկական օգնութիւն։

◆ Այս տարի կարկուտը Բօրչալուի գաւառի Լօռու վիճակի ազգաբնակութեանը պատճառել է 100,000 րուբլու վնաս։

ԳԻՏՈՒԹ.- ԳՐԱԿԱՆ.- ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոնում

Հինգշաբթի, նոյեմբերի 17-ին, Թիֆլիսի Արքունական Թատրոնում տեղի ունեցաւ երաժշտագէտ Պալիևվի բենեֆիսը։

Երաժշտագէտ Պալիևը այս տարի գլխաւոր ղեկավարն էր օպերային ներկայացումների և նրա բենեֆիսը գրաւել էր բազմաթիւ հասարակութիւն դէպի Թատրոն։

Ներկայացվեցին երկու օպերա՝ Չայկովսկիի «Իօլանտա» և Էսպօզիտոյի «Կամօրրան»։

Երկու օպերաների միջարարում տեղի ունեցաւ բենեֆիսային հանդէսը։ Պալիևին մատուցվեց մի ուղերձ երաժշտական երգեցիկ խմբի կողմից։ Հասարակութիւնը ողջունեց բուռն ծափահարութիւններով։

Օպերաների ներկայացումը երգիչների համերաշխ ջանքերով թողեց գեղեցիկ տպաւորութիւն։

Հայկական բեմը

Մենք խօսել ենք արդէն «Միրրա Էֆրօս» դրամայի մասին, երբ նա առաջին անգամ ներկայացվեց հայ բեմի վրա։ Ուստի երկրորդ ներկայացման առիթով, որ տեղի ունեցաւ հինգշաբթի, նոյեմբերի 17-ին, մենք կը տանք միայն մի քանի ակնարկներ դերակատարների խաղի մասին։

Միրրա Էֆրօսի դերը կատարում էր տիկ. Մայսուրեան և կատարում էր լաւ, տալով ճշգրիտ գաղափար այն տիպի մասին, որ հանդէս է բերել պիէսի հեղինակ Գօրդինը։ Մայսուրեանը կարողանում է ձուլել իր ներկայացրած տիպի մէջ կամքի անդրդուելիութիւն, բնաւորութեան ոյժ, սեփական արժանաւորութեան գիտակցութիւն։ Նրա խօսքերի արտայայտութեան մէջ ցոլում են մտածող և հոգացող մայր, իր զաւակների բարօրութեան և տան բարեկեցութեան նուիրված տանտիկին։ Միրրա Էֆրօսը տիկին Մայսուրեանի լաւագոյն դերերից մէկն է։

Զաբէլ տիպական էր իր դերում։ Նրա Դվօյրան բաւականաչափ գաղափար է տալիս հրէական որոշ խաւերի կանանց մասին։ Վատ չէր Ցամիկը Մախլեայի համեստ դերում։

Ադամեան Շեյնգիլի դերում հանդէս բերեց առանձին տեսարաններում բնորոշ, ուժեղ և աջող խաղ. բայց անկարող եղաւ ամբողջացնել դերը և տալ միաձոյլ հոգեբանական տիպ։

Նոյնը պէտք է ասել Շահխաթունու մասին։ Նրա Իօսելէն խառնուրդ է մի կողմից խելացի, բարի և անձնուէր, միւս կողմից անհեթեթ, անխիղճ և թուլամորթ մի անձի։ Նրա տիպը պէտք է մի որոշ չափով ցոլացնէ իր վրա այն պայքարը, որ մղվում է նրա մօր և կնոջ միջև՝ ազդեցութեան շրջան սահմանելու համար։ Առանձին կտորները աջող էին և տպաւորիչ, իսկ ամբողջութիւնը անկատար։

Միրզոյեան լաւ էր Սօլոմոնի դերում։

Աւետեան կենդանի կերպով, առողջ հումօրով ներկայացրեց Նուխիմի տիպը, որի խօսքերը զուարթ տրամադրութիւն էին ստեղծում հանդիսականների մէջ։

Շատ աջող և համակրելի գծերով տիկին Գուլազեան ներկայացրեց Շլօյմկէի փոքրիկ, բայց գեղեցիկ դերը։

Ալիխանեան (Դանիա) բաւարար էր։

«Միրրա Էֆրօս» պիէսը հետաքրքրում է հանդիսականին և բռնում նրա ուշադրութիւնը բեմի վրա։

Պիէսի մէջ կան անհարթութիւններ և մի երկու անբնական ձևակերպութիւններ, հիմնական տենդենցիան էլ վիճելի կողմեր ունի. այնու ամենայնիւ նա լաւ պիէս է և ունի թէ հոգեբանական և թէ հասարակական հետաքրքրութիւն։ Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 16 նոյեմբերի

Խնդրում եմ չը մերժէք տեղ տալ «Մշակի» առաջիկայ համարում իմ այս երկտողիս՝ ճշմարտութիւնը վերականգնելու համար։

«Մշակի» № 252-ում, «Մամուլ» վերնագրով բաժնում զետեղված է մի ընդարձակ յօդուած՝ «Հօրիզօն» և «Մամուլ» լրագիրների դէմ՝ Թիֆլիսի վաճառականութեան մասնակցութեան առիթով թեմական պատգամաւորի ընտրութեան մէջ։

Յօդուածի հեղինակը, չը գիտեմ ինչ փաստերի վրա հիմնված, յայտարարում է, թէ իբր ես թեմական պատուիրակների ժողովում հանդիսացել եմ «Հօրիզօնի» և հօրիզօնականների կողմից կաթողիկոսական պատգամաւորութեան թեկնածու՝ հակառակ վաճառականութեան, որ ես պարտութիւն եմ կրել, և դրանից յետոյ դիմել եմ կրկին նոյն վաճառականութեան պարագլուխ Ա. Միլեանին, Խ. Աֆրիկեանին, Լ. Մանթաշեանին և Ս. Կաֆեանին, որպէս զի նրանք օգնեն դպրոցական ուսուցչական ֆոնդի գործում։

Որ ես դիմել եմ պ.պ. Միլեանին, Աֆրիկեանին և Կաֆեանին յոբելեանական յանձնաժողովի մէջ մտնելու և ֆոնդի գործին աջակցելու համար, այդ ճիշդ է, բայց որ «Հօրիզօնը» և հօրիզօնականները կաթողիկոսական պատգամաւորութեան համար ունեցել են իրանց թեկնածուն և որ իբր այդ թեկնածուն եղել եմ ես և կրել եմ պարտութիւն, այդ ինձ համար միանգամայն նորութիւն է։

Կաթողիկոսական պատգամաւորութեան հարցի մասին ես ոչ մի խորհրդակցական ժողովում չեմ մասնակցել ու չեմ զբաղվել, և ոչ մի խմբակցութիւն էլ չէ առաջարկել ինձ քուէարկվել պատգամաւոր։ Պատուիրակների ժողովում, արդարև, թեկնածուների անուններ տալիս, տուել են և իմ անունը, բայց ես հրաժարվել եմ քուէարկվելուց, բացատրելով որ ես արդէն ընտրված եմ Երուսաղէմի թեմից պատգամաւոր։ Իմ այս խօսքերս կարող է հաստատել ժողովի նախագահ Հ. Առաքելեանը։

Ուրեմն էլ որտեղից է երևում, որ ես կազմակերպված խմբակցութեան կողմից թեկնածու եմ եղել և պարտութիւն եմ կրել։

Եթէ ես լինէի թեկնածու, պէտք է հաւատացած լինել, որ երբէք չէի ծածկի, թէկուզ պարտութիւն էլ կրած լինէի, որովհետև ես դրանում ոչ մի անպատւաբեր բան չեմ տեսնում։

Ամենակտրուկ կերպով յայտնում եմ, որ կաթողիկոսական հարցի շուրջը Թիֆլիսում կատարվող բանակռւի և ինտրիգների հետ ես ոչ մի կապ չունեմ, հետևաբար ես առիթ չեմ տուել այդ հարցերում խառնել իմ անունս, մանաւանդ ուղղակի կամ անուղղակի կերպով կապելու Ֆոնդի խնդրի հետ։

Օգտվելով դէպքից, հարկաւոր եմ համարում յայտնել, որ Թիֆլիսի վաճառականութեան մի որոշ մասի մէջ տարածված լուրերը, թէ իբր ես մասնակից եմ այն յօդուածներին, որոնք տպվել են վերջին ժամանակներս «Հօրիզօն» և «Մամուլ» լրագիրներում Թիֆլիսի վաճառականութեան մասին և նրա ներկայացուցիչներ Ա. Միլեանի, Խ. Աֆրիկեանի և այլոց, միանգամայն հնարովի են և զուրկ ամենայն մի արդարացի հիմունքից։

Ս. Յարութինեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Քանի որ պ. Ս. Յարութինեանը իմ վկայութիւնն է կոչում, քաղաքացիական պարտք եմ համարում մի քանի խօսք ասել նրա նամակի առիթով։

Այդ նամակով պ. Ս. Յարութինեանը ճգնում է համոզել հայ հասարակութեան, որ իբր ինքը կաթողիկոսական ընտրութեան ներկայ պայքարի մէջ ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել, չէ խառնվել, իրան չէզոք է պահել, ոչ մի խմբակցութեան կողմից իբրև կանդիդատ չէ առաջարկվել, և այլն։

Նայենք փաստերին։ Պ. Ս. Յարութինեանը լուսնի վրա չէ ապրում, այլ մեր մեղաւոր աշխարհի վրա։ Նա լրագիր, անշուշտ, կարդում է. նա շատ լաւ գիտէ ուրեմն այն մեծ հետաքրքրութիւնը և սրան կից այն մեծ գայրոյթը, որ առաջ եկաւ հայ հասարակութեան մէջ, երբ մերկացվեց պատգամաւորացուների հօրիզօնական խոլորդային ցուցակը, որով հօրիզօնական խմբակցութիւնը կամեցել էր տեղապահ Սուրէնեանի միջոցով ազդել Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Մանկունի սրբազանի վրա և ընտրել տալ պատգամաւորներ «համբաւաւոր, անկուսակցական» մարդկանց անունով մի խումբ որոշ հոսանքի պատկանող կուսակցականների։ Այդ ցուցակի մէջ կար և պ. Ս. Յարութինեանի անունը։ Միւս կողմից, անշուշտ, պ. Ս. Յարութինեանը [illegible] կը լինի, որ հասարակական կարծիքը այդ խոլորդային ցուցակի մշակումը, կազմումը վերագրում է տեղապահ Սուրէնեանի «անխորհուրդ խորհրդականներին», որոնց գոյութիւնը երևի անյայտ չէ պ. Ս. Ցարութիւնեանին։

Արդ, գտնվեցին մարդիկ, որոնք հրապարակով յայտնեցին և բողոքեցին, թէ իրանց անունները մտցված են այդ ցուցակի մէջ առանց իրանց գիտութեան։ Բայց Ս. Ցարութիւնեանը լռեց և այս դէպքում արդարացրեց, թէ «լռութիւնը համաձայնութեան նշան է», մանաւանդ որ նա ընտրվեց և պատգամաւոր Երուսաղէմի կողմից։ Իսկ դեռ իմ Կ. Պօլսում եղած ժամանակ յայտնի էր, որ պ. Ս. Ցարութիւնեանին Երուսաղէմի պատգամաւոր և Լէօին նրա անձնափոխանորդ ընտրել տալու համար մի եպիսկոպոսի կողմից քայլեր և միջնորդութիւն են արված Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Դանիէլ արքեպիսկոպոսի մօտ՝ Նշանեան Մեսրոպ վարդապետի միջոցով։

Ուրեմն հօրիզօնական խլուրդային ցուցակի մէջ պ. Ս. Ցարութիւնեանի անունը մտած լինելը և յետոյ համաձայն այդ ցուցակի ընտրված լինելը, առանց որևէ բողոքի այդ ցուցակի դէմ, պարզ ցոյց են տալիս, որ պ. Ս. Ցարութիւնեանի պնդումը, թէ ինք որևէ մասնակցութիւն չէ ունեցել պայքարի մէջ, բացատրութիւնների կարօտ է։

Գանք երկրորդ փաստին։ Երբ Թիֆլիսում սկսվեց ընտրական պայքարը, գործում էին երկու բանակներ, մինը՝ յօգուտ Օրմանեանի, միւսը՝ հակառակ։ Հակառակ Օրմանեանի գործողները համախմբված էին «Հօրիզօն» լրագրի շուրջը, ինչպէս յայտնի է։ Արդ, պատգամաւորի ընտրութիւնից դեռ մի շաբաթ առաջ «Մամուլ» թերթը յայտնեց, թէ հակաօրմանեանական բանակը դրել է պ.Ս. Ցարութիւնեանի թեկնածութիւնը։ Այդ ժամանակ ևս պ. Ս. Ցարութիւնեանը լռեց և ոչ մի խօսքով չը յայտնեց, թէ ինքը թեկնածու չէ։ Միայն այժմ, ընտրութիւնից յետոյ, նա վեր է կացել և յայտնում է, որ ինքը ոչ մի խմբակցութեան կանդիդատ չէ եղել։

Երրորդ փաստ, և այս ես կարող եմ յայտնել՝ իբրև նոյեմբ. 6-ի ժողովի նախագահ։ Այդ ժողովում պ. Ս. Ցարութիւնեանի թեկնածութիւնը դնողները, իբրև ժողովի նախագահի և պատգամաւորի, եղան բացառապէս հօրիզօնական անձինք։ Թող պ. Ցարութիւնեան անկեղծ լինի և խոստովանէ, որ եթէ նա հրաժարվեց, այդ ոչ թէ այն պատճառով, որ նա, ընտրված լինելով Երուսաղէմի թեմի պատգամաւոր, չէր կամենում վիրաւորել այդ թեմը, ինչպէս նա յայտարարեց ժողովում, այլ որովհետև տեսաւ, որ իր թեկնածութիւնը առաջարկողները փոքրամասնութիւն են կազմում։ Մենք կը հաւատայինք պ. Ս. Ցարութիւնեանի անկեղծութեան, եթէ չունենայինք մի ապացուցող փաստ, որ ընդհակառակն է ապացուցանում։ Նա, Ս. Ցարութիւնեանը, մայիսին ընտրված էր Ղազախի գործակալութեան կողմից պատուիրակ. հապա ինչո՞ւ պ. Ցարութիւնեանը չը զգուշացաւ վիրաւորել այդ գործակալութեան հայ ժողովուրդը—որ, ի դէպ է ասել, թւով աւելի շատ է, քան Երուսաղէմի թեմինը—և երկրորդ անգամ պատուիրակ ընտրվեց Թիֆլիսի Ջրկինեց եկեղեցում։ Ինչո՞ւ երկու տարբեր չափեր է գործածում պ. Ցարութիւնեանը երկու տեղերի հայ ժողովրդի վերաբերմամբ։ Չէ որ իր խօսքերից կարելի է ենթադրել ուրեմն, որ նա կամեցել է վիրաւորել Ղազախի ժողովուրդը։ Բայց խնդիրը շատ պարզ է պ. Ս. Ցարութիւնեանը, իբրև զգոյշ մարդ, կանխաւ կամեցել է ապահովել Սուրէնեան և Մեսրոպ եպիսկոպոսների միջոցով իր պատգամաւորութիւնը մի այլ տեղից, որպէս զի եթէ Թիֆլիսում չանցնէ, գոնէ Երուսաղէմից լինի պատգամաւոր, իսկ եթէ Թիֆլիսում աջողվի, այդ դէպքում կամ կունենար երկու ձայն և կամ շատ հեշտ էր հրաժարվել Երուսաղէմից և տեղ տալ իր բարեկամ Լէօին (որին և հէնց այդ նպատակով ընտրել էին տուել անձնափոխանորդ), ինչպէս արեց Ղազախի վերաբերմամբ. և հաւատացէք, որ այն ժամանակ պ. Ցարութիւնեանը ոչ մի փափկանկատութիւն չէր ունենայ Երուսաղէմի վերաբերմամբ, ինչպէս չունեցաւ իր մայրենի գաւառ Ղազախի վերաբերմամբ։

Ուրեմն՝ այս բոլոր փաստերը և այն հանգամանքը, որ պ. Ս. Ցարութիւնեանը մինչև վերջին րոպէն ոչ մի քայլ չէր արել ցոյց տալու համար իր անհամերաշխութիւնը հօրիզօնականների հետ, լիակատար իրաւունք էին տալիս «Մշակի» մամուլի բաժինը կազմողին՝ ասել, թէ նա՝ պ. Ս. Ցարութիւնեանը հօրիզօնականների թեկնածուն է, հետևաբար և հօրիզօնականների վարմունքի կամ արածի մի բաժինն ևս ընկնում է պ. Ցարութիւնեանի վրա, որովհետև նրա համերաշխութիւնը հօրիզօնականների կամ նրանց ըստ հոգւոյ ազգակիցների հետ նոր չէ. և պ. Ս. Ցարութիւնեանը ահա 3 տարի է, որ աշխատում է ամեն մի քայլում ցոյց տալ այդ համերաշխութիւնը։ Թող պ. Ցարութիւնեանը ինձանից նոր փաստեր չը պահանջէ։

Ինչ վերաբերում է Ս. Ցարութիւնեանի տրտունջի, թէ ինչու խնդիրը կապում են ուսուցչան ֆօնդի հետ, պէտք է ասել, որ ոչ ոք այդ խնդիրը չէ կապում ֆօնդի հետ։ Դրանով մամուլ կազմողը կամեցել է միայն ցոյց տալ, թէ որքան էլ «Հօրիզօնը» և հօրիզօնականներն աշխատեն ժխտել վաճառական դասակարգի իրաւունքները՝ մասնակցելու ազգային-եկեղեցական գործերին, որքան էլ նրանք ծաղրեն վաճառականներին, բայց և այնպէս ամեն մի ազգային կարևոր հանգանակութեան ժամանակ մենք ստիպված ենք լինում դիմել այդ միևնոյն վաճառականներին և խնդրել նրանց օգնութիւնը։ Եթէ ներկայ դէպքում պ. Ցարութիւնեանը չէ շարժվել և գործել իբրև հօրիզօնական, իրանից է կախված յայտարարել, թէ ինքը որևէ առնչութիւն և համերաշխութիւն չունի հօրիզօնական լճացած և բորբոսնած ճահճի հետ, իսկ եթէ նա թոյլ է տալիս իր անունը մտցնել նրանց խլուրդային ցուցակների մէջ, թող չը նեղանայ, որ իրան համարում եմ համերաշխ նրանց հետ։

Հ. Ա.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Թոյլատրված է երկաթուղի կառուցանել Աստարայից—Եւլախ։

✦ Պարսից կաբինէտը վճռեց չը դիմադրել էկս-շահին, եթէ նա կապահովէ սահմանադրութիւնը։

✦ Գերմանիան իր շնորհակալիքը ցոյց տալու համար, որ Ռուսաստանը բողոքեց Դարդանէլը գրաւելու դէմ, մտադիր է աջակցել Ռուսաստանին նոր արտօնութիւններ ձեռք բերելու Պարսկաստանում։

✦ Թաւրիզում խօսում են, որ Շուստէրի հեռանալով նրա պաշտօնը տրվելու է ռուսատեաց Լէկօֆրին։

✦ Ցայտնի Մ. Շուստէրը մեկնեց Թէհրանից։ Ասում են, որ նա նոր հովանաւորողներ է գտնելու։

✦ Թէհրանում հնարաւոր է համարվում նախկին շահի վերադարձը էնզէլիից։ Ազգաբնակութեան բոլոր խաւերի տրամադրութիւնը ճնշված է։

✦ Եւրոպական աղբիւրները հաստատում են, որ ոչ մի հաշտութիւն Թիւրքիայի և Իտալիայի միջև չէ կարող լինել, քանի որ երկու կողմերն էլ յամառում են և ոչ մի զիջում անելու տրամադիր չեն։

✦ Աւստրիական սօցիալիստական բիւրօն վճռեց բօյկոտի ենթարկել իտալական ապրանքները, եթէ Իտալիան կը շարունակէ իր խստութիւնները Տրիպօլիսում։

✦ Թիւրքաց մամուլը ցնծում է, որ Ռուսաստանը եւրոպական պետութիւնների կողմից բողոքեց Իտալիայի դէմ Դարդանէլը գրաւելու հարցի առիթով։

✦ Կ. Պօլսում լուր տարածվեց, թէ իտալացիները արդէն սկսել են ռմբակոծել Դարդանէլը։ Այդ լուրից ծագեց զինուորական ապստամբութիւն, որը սակայն իսկոյն ճնշվեց։

✦ Կ. Պօլիսը փութանակի ամրանում է։

✦ Մուխտար փաշան սուլթանի նամակը տանում է նաև Աւստրիա և Գերմանիա։ Ինչպէս յայտնի է, սուլթանը խնդրում է պետութիւններից աջակցել Իտալիայի հետ հաշտութիւն կապելու գործին։

✦ Արաբները Տրիպօլիսում ջրհորների մէջ գտել էին սպանված կենդանիների դիակներ, որից և խօլերա առաջ եկաւ այդ ջրհորների ջուրը գործածող իտալացիների մէջ։

✦ Հռոմի քաղաքային վարչութեան մէջ տեղի ունեցաւ խոշոր սկանդալ։ Քաղաքագլուխը խօսք չը տուեց սօցիալիստ ճառախօսին, որ պատրաստվում էր խօսելու պատերազմի դէմ։ Բարձրացաւ անասելի աղմուկ, եղաւ ծեծ ու ջարդ, որի մէջ շատերը վիրաւորվեցին։

✦ Մուկդէնում դպրոցների մեծ մասը փակ է։ Աշակերտութիւնը մեկնում է քաղաքից յեղափոխականներին միանալու համար։

✦ Չինական յեղափոխութիւնը փոքր ինչ թուլացաւ չին յեղափոխական պարագլուխների միջև սկսված երկպառակութիւնների պատճառով։

✦ Պեկինի մօտ շուտով կը լինի վճռական ճակատամարտ կառավարական զօրքերի և յեղափոխականների միջև, որպիսի ճակատամարտը և կը վճռէ ամբողջ յեղափոխութեան բաղդը։

✦ Չին-յեղափոխականները այն աստիճան զայրացած են գերմանացիների դէմ, որ ամեն քայլափոխում կարող է պատահել, որ հանդիպած գերմանացուն սպանեն։ Ինչպէս յայտնի է, գերմանացիները գաղտնի օգնութիւն են մատակարարում չինական կառավարութեան։

✦ Տօկիօյից դարձեալ զօրքեր են գնում Պեկին։

✦ Իւանշիկայը բողոքեց, որ եապօնացիները օժանդակում են չինական յեղափոխութեանը դրամով։

✦ Շուտով կայանալու է սահմանադիր-ռամկավարների կուսակցական կօնֆերէնցիան 4-րդ Դումայի առիթով ընտրողական յօղունդ և ծրագիր մշակելու համար։

✦ Ոստիկանութեան դեպարտամենտի պաշտօնեաները գեներալ Ջուէվի առաջնորդութեամբ ներկայացան պաշտօնանկ եղած մինիստրի նախկին օգնական գեներալ Կուրլովին և մատուցին շքեղ թանաքաման իր պարագաներով։

✦ Հերքվում է, որ ոչ մի լուրջ տարաձայնութիւն չը կայ ռուսական կաբինէտի անդամների միջև։ Մակարօվի, Տիմաշէվի, Կասսօյի, Սուխոմլինօվի միջև եղած տարաձայնութիւնները սկզբունքային բնաւորութիւն չունեն։

✦ «Рѣчь»-ը հաղորդում է, որ Վիլնայում փակվեց լեհական երեխաների ապաստարանը այն պատճառով, որ ապաստարանում առանց թոյլտւութեան աւանդում էին լեհերէն։

✦ Կիեվում դատ. պալատը 4 ամսով բանտարկութիւն որոշեց մի քահանայի՝ ամուսնութեան կեղծ վկայական տալու համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

17 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոյեմբերի 24-ին լրանում է Բուրէնինի գրական գործունէութեան 50-ամեակը։

Ռուս-անգլիական առևտրական պալատը միջազգային օդագնացութեան ցուցահանդէսի յանձնաժողովի միջնորդութեան համաձայն, որ կայանալու է Մոսկվայում 1912 թ. ապրիլին, յարաբերութեան մէջ մտաւ Լօնդօնի բրիտանական աէրօկլուբի հետ, որպէսզի ցուցահանդէսին մասնակցեն նաև անգլիացիներից։

Օդեսսայում նախագծված է հիմնել երրորդ արտիլերիական դպրոցը, որի պահպանութեան համար պահանջվում է ամեն տարի 403,468 րուբլի։

ՖԵԼԼԻՆ։ Ինժեներ Պօրտը իր հնարած աւտօմօբիլանման սահնակով աջող կերպով 6 մարդկանց հետ 46 վերստ տարածութիւնը անցաւ մի ժամում։

ԿԱԶԱՆ։ Ներքին գործերի մինիստրութիւնը Կազանի նահանգում դաշտերը ցանելու համար գնեց 3 միլիօն պուդ գարի և $1\frac{1}{2}$ միլիօն պուդ հաճար։

ՍՄՕԼԵՆՍԿ։ Տրօյցկի մենաստանում գտնըվեցին 12-րդ դարի գերեզմանատան և ամենահին ժամանակի վանքի մնացորդներ։

ԿՕԼՕԳՐԻՎ։ Հանգուցեալ հողատէր Լուգինը 15,000 ր. կտակեց Մոսկվայի համալսարանին՝ գրադարանը լրացնելու համար։

ԲԵՐԼԻՆ։ 81 տարեկան հասակում վախճանվեց յայտնի պրօֆեսոր-ֆիզիօլոգ Ֆալէնը։

ՄՕՍԿՎԱ։ Սնանկ յայտարարվեց Շապօվի գործարանը։ Պասսիվը կազմում է 2 միլիօն, ակտիվը՝ 1.700,000 ր.։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Փոթորկի պատճառով շատ նաւեր խորտակվեցին։ Կան մարդկային զոհեր։ Նաւերի երթևեկութիւնը անկանոն է։

ՏՈՒԼՕՆ։ «Վօլտէր» զրահանաւի կաթսայի պայթումից սպանվեց մէկ, վիրաւորվեցին ծանր մի քանի նաւաստի։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար** № 4 **գնացքը**՝ (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ՝ 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րոպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րոպէին ցերեկվայ։ **Խառն** № 106 **գնացք**՝ (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ.։ Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.՝

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **Մարդատար** № $^{74}/_{75}$ **գնացքը**. (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ. ,Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ գնացքը՝ 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **Մարդատար** № 5 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստատար** № 3 **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօններով) 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար** № 7 **գնացքը**՝ (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄ՝ **մարդատար** № $^{9}/_{66}$ **գնացքը**՝ (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **Մարդատար** № 5 **գնացքը**՝ 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 **գնացքը**՝ 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն** № 107 **գնացքը**՝ 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար** № 8 **գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № $_{6/10}$ **գնացքը**՝ 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Ձմերային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագու-Ռօստօվ-Խարկօվի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են։

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագու-Ռօստօվի և Կօզլօվի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռօստօվ յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

Высочайше Утвержденное Русское Обществ. Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմերային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով.
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բօլգարիայի, Մակեդօնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ Ռիգա, Լիբավա և Ռէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինովսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։

Գործակալ՝ **Ս. Խ. Սուլխանեանց**
(չ.) 0—25

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9—10 ժ. Ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. Ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—$12^1/_2$—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. Ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՁԱՑ—6—$6^1/$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**
3. 0—117

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(ա. օ.) 669. 100—74

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 12—1-ը։
(երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա.օ.) 1035. 100—21

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրասնօվօդսկի հայոց եկեղեցուն հարկաւոր է մի հմուտ ՏԻՐԱՑՈՒ, տարեկան՝ բացի օրինակատարութիւններից ստացվելիք արդիւնքից՝ տրվում է ռոճիկ 300 րուբլի (երեք հարիւր րուբլի)։

Ցանկացողները դիմեն՝ Красноводскъ (Зак. обл.), Ктитору Шамиру Багирянцу.
1094. 2—1

„Գ Ի Ր“
գրավաճառանոցում վաճառվում են
ՐԱՖՖԻԻ
«Սամուէլ», հատ. Ա., Բ. և Գ. մի գրքի մէջ ամփոփված . 3 ր. 50 կ.
«Դաւիթ-Բէկ», հատ. Ա., Բ. և Գ. վերջաբանով . . 3 » 50 »
«Կայծեր», հատ. Ա. . . 2 » —
«Կայծեր», հատ. Բ. և վերջ. 3 » —
«Խենթ», և «Ջալալէդդին» մի գրքի մէջ ամփոփված . 2 » —
«Խաչագողի Յիշատակարանը» Ա., Բ., Գ. և Դ. հատ. մի գրքի մէջ ամփոփված . . 2 » —
«Խամսայի Մելիքութիւն»
«Ղարաբաղի Աստղագէտը» } 2 » —
«Գաղտնիք Ղարաբաղի»
«Սալբի», հատոր Ա. . 3 » —
ԿԱՅ ԵՒ ԿԱԶՄԱԾ։
Դիմել՝ Тифлисъ՝ Книжный магазинъ „ГИРЪ“.
(ա.օ.) 1095. 2—1

ՆԿԱՐԻՉ
ԱՌԱՔԵԼ ՍԱԳԻՆԵԱՆՑ
նախկին ուսուցիչ Գէորգեան ճեմարանի և Էջմիածնի նկարիչ
Ընդունում է զուտ հայկական ճաշակի՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ, նոյնպէս և ՊՕՐՏՐԷՏՆԵՐԻ ու ԴԵԿՕՐԱՑԻԱՆԵՐԻ պատուէրներ նպաստաւոր պայմաններով։ Հասցէն՝ Тифлисъ. Красильная ул., ограда церкви св. Георгія (на Майданѣ).
(ա. օ.) 1089. 10—1

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльный
Финансово-экономическій и биржевой журналъ
„БИРЖА“
3-ІЙ ГОДЪ ИЗДАНІЯ.

ПРОГРАММА ЖУРНАЛА:

I. Дѣйствующія законоположенія распоряженія правительства, законопроекты, касающіеся биржъ, банковъ, биржевыхъ комитетовъ, акціонерныхъ, промышленныхъ и др. предпріятій.

II. Руководящія статьи по финансово-экономическимъ, биржевымъ, банковымъ, торгово-промышленнымъ и др. вопросамъ.

III. Свѣдѣнія о положеніи биржъ, еженедѣльные обзоры и котировки биржъ русскихъ и заграничныхъ, обзоры рынковъ.

IV. Критическіе обзоры акціонерныхъ предпріятій и ихъ $^0/_0{}^0/_0$ бумагъ, котирующихся на биржахъ, съ предположительнымъ указаніемъ ихъ возможной расцѣнки на биржѣ на предстоящую недѣлю.

V. Хроника биржевая, банковая, торгово-промышленная, желѣзнодорожная и судебная.

VI. Общія собранія и отчеты акціонерныхъ предпріятій. Постановленія биржевыхъ комитетовъ. Движеніе и сборъ на желѣзныхъ дорогахъ.

VII. Таблицы курсовъ и сдѣлокъ всѣхъ $^0/_0{}^0/_0$ бумагъ, котирующихся на биржахъ, таблицы дивидендовъ, сроковъ, купоновъ, тиражей и т. д.

VIII. Обзоры печати, библіографія, смѣсь, почтовый ящикъ.

Собственные корреспонденты въ Парижѣ, Берлинѣ, Лондонѣ, Нью-Іоркѣ и др. городахъ.

УЧАСТІЕ ВЪ ЖУРНАЛѢ ПРИНИМАЮТЪ: Чл. Гос. Думы, проф. *Алексѣенко М. М.*; проф. *Берендсъ Э. Н.*; пр. доц. *Боровой А. А.*; проф. *Варнеке Б. В.*; бар. *Врангель Е. Е.*; *Головинъ К. Ф.*; проф. *Грибовскій В. М.*; чл. Гос. Сов. *Денисовъ В. И.*; кн. *Долгоруковъ М.*; *Евреиновъ М. Н.*; чл. Гос. Думы *Еропкинъ А. В.*; *Зейдманъ А. И.*; *Идельсонъ В. Р.*; проф. *Исаевъ А. А.*; проф. *Колосовъ І. В.*; чл. Гос. Совѣта *Косичъ А. И.*; членъ Гос. Думы *Лерхе Г. Г.*; *Маляревскій К. Д.*; д-ръ *Ла-Маркъ Г. Е.*; *Манусъ И. П.*; проф. *Мигулинъ П. П.*; *Мукосѣевъ В. А.*; *Модель М. С.*; пр.-доц. *Новицкій И. Н.*; чл. Гос. Сов. проф. *Озеровъ И. Х.*; проф. *Пассекъ Е. В.*; *Путиловъ А. И.*; *Папенгутъ П. О.*; *Сперанскій В. П.*; *Успенскій П. Д.*; проф. *Фридманъ М. И.*; *Федоровъ А. П.*; *Шабишевъ С. С.*; *Эмскій* (псевд.).

„Биржа“ даетъ ежемѣсяч. безплат. прилож.—журн. „БИРЖЕВОЙ ЕЖЕМѢСЯЧНИКЪ“ и др. изданія по биржевой и банковой литературѣ.

ПОДПИСНАЯ ЦѢНА на журналъ со всѣми безплатными приложеніями: на годъ—15 руб., на $^1/_2$ года—8 руб., на 3 мѣс.—5 руб. **Отдѣльный № 35 коп.** *За границу*: на годъ—20 руб., $^1/_2$ года—12 руб.

Подписка принимается: въ редакціи—С.-Петербургъ, Мойка 12 и во всѣхъ книжныхъ магазинахъ и почтовыхъ учрежденіяхъ Имперіи.

Пробный номеръ высылается за 10 копѣечную марку.

(շ.) 1093. 2—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.